ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳԱՄԻՐՔՈՒՄ

Ա. ԸՆՏԱՆԻՔԻ ԿԱԶՄԸ, ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՁԵՎԸ ԵՎ ԱՅԼ ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայկական ընտանիքը Հայաստանի երկու հատվածներում՝ արևելահայերի և արևմտահայերի մեջ մի ընդհանրություն ունենալով հանդերձ, իր նիստ ու կացով և սովորություններով ունի որոշ առանձնահատկություններ։ Այդ վերաբերում է նաև գամիրքահայերի ընտանեկան կազմին։ Եվ դա բնական է, քանի որ այդ երկու հատվածները իրարից շատ հեռու լինելուց բացի, դարեր շարունակ գտնվել են և քաղաքական և սոցիալական բավականին տարբեր պայմաններում։

Քաղաքային հասարակության մեջ, եթե տնտեսական միավորը արհեստավորական փոքր ընտանիքն էր հանդիսանում, ապա գյուղերում առավելապես կազմում էր նահապետական բազմանդամ ընտանիքը։ Վերջինս մինչև 19-րդ դարի երկրորդ կեսի սկզբները, հատկապես երկրագործությամբ զբաղվող շրջաններում, ընդհանրություն էր կազմում այնքան ժամանակ, քանի դեռ Թուրքական լծի տակ գտնվող Արևմտյան Հայաստանի գավառներում գոյություն ուներ հողօգտագործման՝ Հագգը-գարար-ի նախնական ձևը[1]։ Գյուղական համայնքի բնակչությունը համայնքային հողից մշակում էր այնքան տարածություն, որքան հնարավորություն և միջոցներ ուներ, և մշակված հողը պահում էր իբրև հագգը-գարար-ով տրված իրավունք։ Ուստի և հողօգտագործման այդ ձևը, եթե մեկ կողմից նպաստավոր պայմաններ էր ստեղծում և պահանջում միացյալ ուժերով աշխատելու, ապա, մյուս կողմից, դեռևս հողի անհատական սեփականության չգոյության պատճառով, գերդաստանները չէին ձգտում բաժանվել, տնտեսական ուրույն միավոր կազմել, քանի դեռ գյուղական տնտեսությունը բավականին պարզունակ տեխնիկայի պայմաններում մեծ թվով աշխատող ձեռքերի և միջոցների կարիք էր զգում։ Բացառիկ նահապետական ընտանիքներ էին լինում, որոնց անդամներից ոմանք արհեստների մեջ մասնագիտանալով, բաժանվում էին։

19-րդ դարի երկրորդ կեսից սկսած ըզղալի փոփոխություն է մտնում գյուղական կյանքում։ Ղրիմի պատերազմից (1853—56 թթ.) հետո, անգլո-ֆրանսիական կապիտալիստների պարտքերի տակ կքած հետամնաց Թուրքիան հարկադրված էր մի կողմից եվրոպական մոնոպոլիստներին տալ աղի, ծխախոտի. կոնցեսիաներ ու երկաթուղային գծերի կառուցման և շահագործման իրավունք, մյուս կողմից փնտրում էր եկամտահարկի նորանոր աղբյուրներ։ Հենց այդ ժամանակ էլ սուլթան Մեճիտի 1858 թ. հատուկ հրամանագրով (իրատե) հաստատվում է թափու-ն, այսինքն՝ հողի անհատական սեփականության իրավունքը։ Հետևաբար, եթե մի կողմից նոր հողամասի ձեռք բերումը փողի հետ կապված լինելով, մատչելի չէր բոլորին, մյուս կողմից էլ վարելահողային տարածությունը բազմացող

[1] Ա. Մկրտչյան, *Հողային հարցը Թուրքա-Հայաստանում*, «Գործ», Բաքու, 1917, № 4, 65—67։

ներգերդաստանային ընտանիքների անդամներին չէր բավարարում։ Բացի այդ, հողը որպես անհատական սեփականություն պարտքերի դիմաց բռնագրավման ենթակա լինելով, գյուղատնտեսությամբ պարապող մեծ ընտանիքները, հետզհետե զրկվում էին իրենց անհրաժեշտ վարելահողերից։ Այսպիսով, սակավահողությունը ներգերդաստանային ընտանեկան զույգերին մղում էր տարբեր պարապմունքների, հետևաբար և բաժանման։ Այդ հանգամանքը հայտնի ազգագրագետ Ե. Լալայանը նույնպես իր ժամանակին ճիշտ նկատելով, նշում է, որ գերդաստանի ներքին տրոհման ամենագլխավոր պատճառներից առաջինը՝ վարելահողերի սակավության պատճառով գերդաստանի անդամների տարբեր զբաղմունքներով պարապելու հետևանք է[2]։

19-րդ դարի վերջերին կապիտալիստական հարաբերությունների զարգացման հետևանքով, դեռևս նահապետական բազմանդամ ընտանիքների տնտեսության ներսում սկսում է սաղմնավորվել փոքր ընտանիքների անհատական սեփականությունը։ Այսուհանդերձ, պետք չէ ենթադրել, որ փոքր ընտանիքը, որպես ուրույն տնտեսական միավոր, Գամիրքում ընդհանրապես առաջացել է միայն հողի անհատական սեփականության հրամանագրի հրատարակումից և կապիտալիստական հարաբերությունների զարգացումից հետո, գերդաստանների տրոհումից փոքրաթիվ ընտանիքներ միշտ էլ եղել են գյուղերում։ Ազգագրական նյութերը հիմք են տալիս ենթադրելու, որ դա գոյություն է ունեցել շատ ավելի վաղ անցյալում։ Այդ մասին են վկայում փոքր ընտանիքը բնորոշող՝ մեկ աղջիկ էրիկ-կնիկ, չամ-ֆյուքուկ-ի տեղական բազմաթիվ հեքիաթապատումները։

Հայկական նահապետական ընտանիքի տնտեսության ղեկավարման հին ձևը, նիստ ու կացը կենցաղում այնպես էին արմատացել, որ չնայած կապիտալիստական հարաբերությունների զարգացման հետևանքով առաջացած նոր պայմաններին, այդ հին ձևը դեռևս պահպանվում էր միայն որոշ փոփոխություններով։ Այսպես, Կյուրինում ծեմճեմենց ընտանիքի հայրը թեև վաղուց մահացել էր, բայց ըստ հին սովորության, ամուսնացած վեց եղբայրները իրենց մեծ եղբոր՝ Խաչեր աղայի գլխավորությամբ երեխաներով միասին (ընդամենը երեսուն հոգի) ապրում էին մեկ տնտեսության մեջ։ Նրանք իրենց հողերը կիսբարության էին տվել և զբաղվում էին վաշխառությամբ և հատկապես գյուղերի հացահատիկի կապալառությամբ։ Արաբկիրում Ղազանջյան Մարտիրոսը իր վեց ամուսնացած զավակներով (32 մարդ) մեկ տնտեսություն էր վարում, որտեղ տան մեծը հայրն էր։ Հայրը և իր վեց զավակները զբաղվում էին պղնձագործությամբ, յուրաքանչյուրը կատարելով այդ արհեստի պրոցեսին հատուկ առանձին պարտականություն։ Հենց այդ պատճառով էլ արհեստավորական ընտանիքներում ամուսնացած եղբայրները մեկ տնտեսության մաս էին կազմում։

Կյուրինում, որը գլխավորապես շալագործության կենտրոն էր, արհեստա-առևտրական գործառնությամբ զբաղվող տնտեսության ղեկավարման ձևը դարձյալ նույնն էր։ Օրինակ, Զուլֆյան հինգ եղբայրները, Զոքարյան չորս եղբայրները զբաղվում էին շալի արդյունագործությամբ և նրանցից ոմանք, թեև երկար տարիներ տարբեր քաղաքներում էին ապրում, սակայն մեկ տնտեսության մաս էին կազմում։ Այդ հանգամանքը, մի կողմից, այսպես ասած, ընտանիքի ղեկավարման նահապետական ձևի կենցաղում ամրացված լինելու, մյուս կողմից տնտեսության ընդհանուր շահերի պաշտպանության հետևանք էր։ Նույն ընտանիքում եղբայրներից յուրաքանչյուրը տարբեր մասնագիտությամբ զբաղվելով հանդերձ, վարում էին նույն գործի տարբեր պրոցեսները։

Կապիտալիզմի ներթափանցման հետևանքով, երբ առևտրական հարաբերությունները աշխուժանում են, Գամիրքի գյուղական տնտեսությունների՝ նահապետական մեծ ընտանիքների ընդերքում առաջանում է նաև մի յուրահատուկ երևույթ՝ փոքր ընտանիքի անձնական սեփականության սաղմնավորում։ Բերենք բազմաթիվ օրինակներից մեկը։ Հալիս գետի ներքին գյուղերից մեկի՝ Չեփնիի բնակիչ Բաթմանյան Գասպարի բազմանդամ ընտանիքը

[2] Ե. Լալայան, Բորչալուի գավառ, «Ազգագրական հանդես», Թիֆլիս, 1903, 10-րդ գիրք, էջ 127։

բաղկացած էր նրա ամուսնացած երեք որդիներից և նրանց զավակներից, զբաղվում էր երկրագործությամբ, անասնապահությամբ։ Տնտեսությունն ուներ իր վարելահողերը և անասունների հոտը։ Վար ու ցանը, հունձը կատարվում էր միասին, սննդամթերքները ամբարվում էին տնտեսության շտեմարանում, սնունդը միասին էր պատրաստվում, սակայն երեք եղբայրներից յուրաքանչյուրը ուներ, բացի ոչխարի ընդհանուր հոտից, իր սեփական ոչխարները, որոնք տրվում էին կիսարարության ձևով բուծման և ստացված մթերքը վաճառում էին ու ձեռք բերված փողը վաշխով շահագործում[3]։

Գամիրքում նահապետական ընտանիքի ղեկավարումը ներկայացնում էր այսպիսի ձև. միշնադարում, ինչպես հայտնի է, տնտեսության ղեկավարը հանդիսանում էր անպայման ընտանիքի հայրը և կամ նրա մահից հետո՝ մեծ որդին։ 17-րդ դարի աշխարհագիր Սիմեոն Լեհացին իր «Ուղեգրություն» աշխատության մեջ խոսելով Սեբաստիայի շրջաններում նահապետական ընտանիքի մասին, գրում է. «և թե հայրն մեռանէր, մեծ եղբօրն հնազանդէին»[4]։ Դա այդպես էր մինչև 19-րդ դարի առաջին կեսի վերջերը, քանի դեռ Գամիրքում հիմնականում տիրում էր բնատնտեսությունը, քանի դեռ առևտրական հարաբերությունները գյուղում նվազ էին զարգացած։ Այդ պայմաններում տնտեսության ամբողջ եկամուտը գտնվում էր տան մեծի լիիրավ կարգադրության տակ, որն իր այդ իրավասությունը մասամբ բաժանում էր իր կնոջ հետ։ Հայրը, եթե տան ներկայացուցիչն էր հանդիսանում. հատկապես արտաքին աշխարհի հետ հարաբերություն ունենալիս, վարում էր դրամական գործերը և պատասխանատու էր ամբողջ տնտեսության կանոնավոր ընթացքի համար, ապա տնտեսության ներքին գործերը գտնվում էին տանտիկնոջ ղեկավարության ներքո։ Բացի այդ, վերջինս շատ կարևոր և հաճախ էլ վճռական դեր էր կատարում հատկապես ընտանիքի երիտասարդ տղաներին հարսնացուներ գտնելու գործում։ Այնուամենայնիվ, չպետք է ենթադրել, ինչպես անում են ոմանք, ընդհանրացնելով մասնակի դեպքերը, որ ընտանիքի մյուս անդամները, հատկապես կանայք ոչ մի իրավասություն չունեին և տնտեսության բացարձակ տերը տան մեծն էր համարվում և ոչ ոքի առաջ պատասխանատու չէր իր գործերի համար։ Այստեղ ուզում ենք մեջբերել բազմաթիվ օրինակներից մեկը, որը լրիվ գաղափար է տալիս Գամիրքի հայ նահապետական ընտանիքում գոյություն ունեցող որոշ սովորութային իրավունքի մասին։ Կեմերեկում նահապետական մեծահարուստ ընտանիքներից մեկի ավագը՝ Ստեփան Էհմալյանը, առևտրով, գերդաստանի ուղտերի քարավանով Բրուսա քաղաքը գնալիս ծանոթանում է մի դեռատի կնոջ և նրանից ունենում է մի ապօրինի զավակ։ Երբ այս եղելությունը նրա ծննդավայրում հայտնի է դառնում, մեծ աղմուկ է առաջանում Էհմալյանների օջախում։ Գերդաստանի անվանը հասցված անպատվության համար ազգակից ընտանիքների մեծերի հավաքը Ստեփանին տեսեռ մաեռում է անում, այսինքն՝ պապենական ժառանգությունից զրկելով, վտարում է ոչ միայն ընտանիքից, այլև գյուղական համայնքից։ Նրան տրամադրվում է գյուղից հեռու «Հորոխ» կոչված տեղում մի փոքր հողամաս, որտեղ նա իր երկրորդ կնոջ հետ ապրում է մինչև իր կյանքի վերջը[5]։ Այսպիսի պարագաներում և, ընդհանրապես, ամուսնու մահից հետո, երեխաների անչափահասության ժամանակ հայ կինը տան մեծի դեր էր կատարում։ Եվ նույնիսկ տնտեսության ղեկավարման մեջ հայ կնոջ ցուցաբերած մեծ ընդունակության հետևանքով, տվյալ ընտանիքը կոչվում էր նրա անունով։ Օրինակ, Մեեեշեեք (Մանուշակենք), Բայրի-Գուճարեեք, Մեեեետեեք, Հալչոեց Մաքը. էֆեեդիի տուեը. անվանակոչումները խոսում են այն մասին, որ այդ ընտանիքների ղեկավարները կանայք են եղել։ Այս և տարբեր հանգամանքներից ելնելով, հիմք կա ենթադրելու, որ անցյալում հայ կնոջ կարծեցյալ ստրկությունը

---

[3] Պատմող՝ Միքայել Զեքյան, 70 տարեկան, կոլտնտեսական, բնիկ չեփնիցի, այժմ բնակվում է Շահումյանի շրջկենտրոնում։

[4] Սիմեոն Լեհացի, Ուղեգրություն, Վիեննա, «Հանդես ամսօրեայ», 1934, էջ 157—158։

[5] Մարիամ Տոնապետյանի պատմածից (80 տարեկան, բնիկ կեմերեկցի)։

ընտանիքում հիմնականում գոյություն չի ունեցել։ Իսկ ինչ վերաբերում է նոր հարսների ժամանակավոր չխոսկանությանը. կամ ինչպես ասում են Արարկիրում՝ մունջ կենալուն, ինչպես նաև նախքան քնելը կեսրայրի, մեծ տագրերի ոտնամանները հանելուն, ոտքերը լվանալուն, հագուստները հանելիս օգնելուն և նույնիսկ կեսրայրի թիկունքը շփելուն, որ նա քնի, ապա այդ բոլորը, թերևս որպես հարգանքի նշան գալիս է դեռևս շատ հին ժամանակներում նոր հարսին՝ որպես ընտանիքի անդամ ուղեգրելու մի հին ծիսական արարողությունից՝ շիլեից։ Դա հավանաբար անհրաժեշտ ժամանակամիջոց էր ինչպես բոլոր նորընծաների, նույնպես և նորահարսների համար, մինչև ծննդաբերությամբ նրա արյունակից անդամ դառնալը իր ամուսնու ընտանիքին։ Հնի այդ վերապրուկը, եթե մեր օրերին վերացել էր քաղաքներում, ապա Գամիրքի առանձին շրջանների գյուղական վայրերում, ինչպես ասվեց, այն դեռևս պահպանվում էր որպես հարգանքի նշան։ Նորահարսների չխոսկանությունը, կանանց առանձին ճաշելը, եթե գյուղական մեծ ընտանիքներում մինչև վերջերս դեռ պահպանվում էին, տպա քաղաքային փոքր արհեստավորական ընտանիքներում դրանք որոշ փոփոխությունների էին ենթարկվել։ Օրինակ, դեռևս հարսնության առաջին օրից կեսրայրի և սկեսուրի կողմից թույլատրվում էր նորահարսին մունջ չպահել և միասին սեղան նստել։ Համենայն դեպս, քաղաքամերձ գյուղերում ևս նախկինում եղած այդ խստությունը, առևտրական հարաբերությունների աշխուժացումից հետո որոշ փոփոխությունների էր ենթարկվել։ Օրինակ, Սեբաստիայի շրջանի հայ գյուղերում, կանայք տղամարդկանց հետ միևնույն բաժնում էին նստում, ըստ տարիքային հասակի. և սեռերը ոչ-խառն։ Երիտասարդ կանայք և աղջիկներ օգաներում տղաների խաղերին թեև չէին մասնակցում, բայց ընկերակցում էին նրանց երգերին։

Կապիտալիստական հարաբերությունների զարգացման հետևանքով, որոշ փոփոխություն առաջացել էր նաև ընտանիքի ղեկավարման ձևի մեջ։ Օրինակ, Գամիրքի հայկական ընտանիքում, հոր մահից հետո, կամ նրա ծերության ժամանակ, անհրաժեշտ չէր, որ միշտ մեծ եղբայրը նշանակվեր տան ղեկավարը, այլ եղբայրներից ամենաճարտարը, խելացին, գրագետը, հասարակության հետ շփում ունեցողը, թեկուզ նա լիներ միջնեկը կամ կրտսերը, որ ղեկավարում էր տնտեսությունը մոր հետ։ Ինչպես տեսնում ենք, այս պայմաններում ավագությունը խոնարհվում է խելքի առաջ։ Այդպիսի բազմաթիվ օրինակներից մեջբերենք թեկուզ մեկը։ Կյուրինում Ճըղըլենց Մղդսի Կարապետը ուներ չորս որդի, որոնցից մեկը ամուսնացած և իրենից փոքրի հետ զբաղվում էր շալագործությամբ, միջնեկը՝ Հակոբը, ջորիներով փոխադրական առևտուր էր անում, իսկ փոքրը դպրոց էր գնում։ Մնողները և չորս եղբայրները ապրում էին միասին, բայց տնտեսության ղեկավարն էր միջնեկ տղան՝ Հակոբը, իր մոր հետ։ Այսպես, ուրեմն, տնտեսության ղեկավարման գործում արտաքին աշխարհի հետ հարաբերության համար, եթե միջնեկն էր տան ղեկավարը, ապա տնտեսության ներքին գործերը գտնվում էր մոր իրավասության տակ։ Եթե դա այդպես էր քաղաքատիպ մեծ ավանների արհեստագործական ավաններում, ապա գյուղական վայրերում հիմնականում երկրագործությամբ և օժանդակ անասնապահությամբ զբաղվող տնտեսությունների ղեկավարման գործում ևս տեղի էր ունեցել աշխատանքի բաժանում։ Այսպես, Հալիսի ներքին հովտի. Կեմերեկի շրջակա գյուղերից Թեքմենում, Պարսամյանների մեծ ընտանիքը բաղկացած էր 25 մարդուց։ Տան ղեկավարը, մեծ եղբայրը՝ Մարտիրոս աղան էր. եղբայրներից մեկը տնտեսության մեջ զբաղվում էր ոչխարների հոտի պահպանության գործերով, միջնեկ եղբայրը՝ Վարդիվարը, մթերքների առուծախով և վաշխառությամբ[6]։ Նրանցից յուրաքանչյուրը. տնտեսության՝ իրեն հանձնված ճյուղի թեև ազատ ղեկավարն էր հանդիսանում, սակայն ինչպես տնտեսության անհրաժեշտ իրերի, կենդանիների դնումը, նույնպես և

---

[6] Թեքմեն գյուղում հարկահավաքի ժամանակ Պարսամյան ընտանիքի առևտրական գործերով զբաղվող Վարդիվարը, ինչպես ասվեց, զբաղվում էր վաշխառությամբ. նա գյուղացիներին տալիս էր մի «մեչիգիե» (քսան ղուրուշի միավոր) և կանխիկ առնում էր մեկ ղուրուշ տոկոս մեկ ամսվա համար։

ավելացած բրդերի, կաթնամթերքների, հացահատիկի և բանջարեղենի վաճառումը տեղի էր ունենում երեքի նախօրոք խորհրդակցությամբ։ Այդպիսի մեծ տնտեսություններում, որոնք բաղկացած էին հաճախ կես վեցյակ զույգերից, գոյություն ուներ ըստ սեռի և հասակի աշխատանքի բաժանում, բացի այն, որ կանանցից յուրաքանչյուրը, ըստ հասակի և փորձառության, կատարում էր իրեն բաժին ընկած աշխատանքը՝ հաց թխել, սնունդը պատրաստել, անասունները կթել, արտ քաղել և այլն, սակայն, իրենց հագուստեղենի պատրաստման գործում ներգերդաստանական փոքր ընտանիքի կինը ինքն էր կատարում իր ամուսնու և երեխաների հագուստի՝ գուլպայի, շալվարի, մեջքի շալի (գոտու), դոլախի, գլխանոցի (բաշլըխ) և աբայի շալի գործելու, կտրելու աշխատանքները։

Բ. ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԵՎ ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հարսանիքը պատմական Հայաստանի բոլոր գավառներում, այդ թվում և Գամիրքում, հասարակական կյանքի մեծ իրադարձություններից մեկն էր։ Դա ամուսնության հետ կապված սովորույթների, արարողությունների և ուրախությունների մի կոմպլեքս է, որը թեև սոցիալ-տնտեսական նոր պայմաններին համընթաց նոր երանգավորում էր ստացել, այնուամենայնիվ, Գամիրքում մինչև համաշխարհային առաջին պատերազմը, հարսանիքի ավանդական սովորությունները, հիմնականում պահպանվում էին։

Գամիրք գավառի հայ ազգաբնակչությունը, ինչպես նշվեց, թեև միջնադարում պատմական Հայաստանի ներքին գավառներից էր գաղթել, ուստի և պահպանել էր հայրենի գավառների ավանդական սովորություններն ու հարսանեկան ծիսական արարողությունները, այսուհանդերձ, Գամիրքում տեղական նոր պայմանների և տարբեր ժողովուրդների հետ հարակցության ու կուլտուրական փոխազդեցության հետևանքով ավանդականը ստացել էր նոր երանգավորում։ Գամիրքը որպես ազգագրական մի ուրույն շրջան, իր առանձնահատկություններն ունենալով հանդերձ, ամբողջությամբ վերցրած ուներ նաև մի ընդհանրություն։

Հարսանիքները ընդհանրապես տեղի էին ունենում աշնան վերջերին՝ բերքը ներս առնելուց հետո, դա միակ ազատ և հարմար ժամանակն էր մի այդպիսի շրջանի համար, որտեղ հիմնականում զբաղվում էին գյուղատնտեսությամբ։ Մենք այստեղ քննության առարկա կդարձնենք ոչ միայն Գամիրքի հարսանեկան ընդհանուր սովորույթները, այլև ուշադրության կառնենք նույն գավառի տարբեր շրջանների առանձնահատկությունները, որոնք իրենց հերթին կօգնեն ընտանեկան հարաբերությունների պարզաբանմանը։

Ծնողների համար, ինչպես հայտնի է, իրենց չափահաս զավակներին[7] ամուսնացնելը ոչ միայն բնական և լավ ցանկություն էր, այլև սոցիալ-տնտեսական մի անհրաժեշտություն, աշխատանքում թև ու թիկունք, նեցուկ ունենալու և պապենական օջախը անշեջ պահելու ձգտում։ Այդ իսկ պատճառով չափահաս տղա զավակ ունեցող ծնողները, հատկապես նախօրոք իրենց մտքում քննության էին ենթարկում իրենց ապագա հարսնացուին։ Այդ հարցի առաջնությունը վերաբերում էր տղայի մորը, որը ամուսնու հետ առանձին զրույցի նյութ էր դարձնում իրենց շրջանակում գտնվող չափահաս աղջիկների և նրանց ծնողների վարքն ու բարքը, առողջական վիճակը, դիրքը և հատկապես աղջկա մոր վարքը, որի մասին հետևյալ ասացվածքն էր ստեղծվել՝ «Մորը նայիր՝ աղջիկը առ, եզրին նայիր՝ կտավը (բիազը) առ»[8]։ Այսուհանդերձ բացառված չէր նաև, որ չափահաս տղաներն իրենց հերթին երբեմն ընտրած լինեին իրենց ապագա հարսնացուն։ Գամիրքի տարբեր շրջաններում այդ կատարվում էր տարբեր ձևով. օրինակ, Բինգյան գյուղի չափահաս տղաները շրջելով Եփ-

---

[7] Գամիրքի գյուղերում չափահաս էր հաշվում 18 տարեկան տղա զավակը, 15 տարեկան աղջիկը։ Իսկ քաղաքներում՝ 18 տարեկան աղջիկը, 21—25 տարեկան տղան։

[8] Գամիրքում հատկապես Կեմերեկից-Կեսարիա ժողովրդական ասացվածքները թրքերեն էին լինում՝ «Անասընա բաղ գըզընը ալ, քենարընա բաղ բեղինը ալ»։

բատի ափերի աղբյուրների մոտերքը, աչքից հեռու, այդ վայրում հանդիպում էին իրենց հավանած աղջկան, որը սափորով ջրի էր գալիս։ Տղան առանց որևէ բառի, նրա ոտքերի առաջ մի կարմիր խնձոր էր գլորում։ Այդ սովորությունը իր արտահայտությունն է գտել նույնիսկ ժողովրդական բանահյուսության մեջ։

Խնձոր մ'ունիմ խաձած է,
Խաձած տեղն արծթած է,
Էդբերս ուղեց չավի՝
Էս իմ յարիս տվածն է[9]։

Ծնողները նախօրոք կատարելով իրենց ընտրությունը կամ հավանելով իրենց տղայի ընտրածին, ծանոթների կամ բարեկամների միջոցով զգուշությամբ աղջկա ծնողների մտադրությունը իմանալուց հետո, աղջիկտեսի էին գնում, որը Գամիրքում, ըստ գյուղի, քաղաքի և յուրաքանչյուր շրջանի կուլտուր-կենցաղային պայմանների, տարբեր ձև ուներ։ Օրինակ, Ակնում տղայի ծնողները տաներեց քահանայի գլխավորությամբ՝ իրենց մոտիկ բարեկամներից, աղջկա ծնողքի մոտ խնամախոսության էին ուղարկում, առաջին համաձայնությունը կոչվում էր խոսքկալ։ Կեսարիայում գոյություն ուներ տարբեր սովորություն։ Տղայի ծնողները իրենց ծանոթի կամ բարեկամի գլխավորությամբ, որին ընկերանում էր նաև ապագա փեսացուն, գնում էին աղջիկտեսի։ Պետք է նշել, որ չափահաս աղջիկ ունեցողները, ըստ տեղական սովորության, գիտեին, որ երկուշաբթի և երեքշաբթի օրերը աղջիկտեսի են գալիս, ուստի և այդ օրերին իրենց տները սովորականից ավելի մաքուր և դասավորած էին պահում։ Այցելուների կողմից թեև նշանախոսության մասին խոսք չէր լինում, բայց աղջկա կողմի տնեցիները այդ անեպատակ այցելության իսկական նպատակը կռահում էին անմիջապես[10]։

Այցելուների առաջնորդը, ըստ սովորության, խմելու համար ջուր էր խնդրում։ Ինչպես հայտնի է, ջուր հրամցնողը ընդհանրապես տան չափահաս աղջիկն էր լինում, ուստի և աղջիկը ջուրը բերելով խոնարհությամբ հրամցնում էր խնդրողին և ձեռները կրծքին ակնածանքով սպասում էր մինչև խնդրարկուի ջուր խմել վերջացնելը, ապա ջրի բաժակը վերցնելով, ետ էր քաշվում և մի քանի վայրկյան կանգնած բարև բռնում։ Դա առիթ էր տալիս այցելուներին աղջկան մոտիկից դիտելու։ Տան մեծի նշանի վրա, երբ աղջիկն արդեն քաշվում էր ներքնասենյակը, այցելուներն էլ իրենց հերթին մեկնում էին։ Տղան, եթե հավանության էր արժանանում, իսկ աղջիկն էլ իր հերթին հավանություն էր գտնում տղայի կողմից, աղջկա կողմը ընդհանրապես լուռ էր մընում և սպասում, որ տղան իր քրոջ կամ հարսի միջոցով լուր ուղարկի աղջկան, որ համակրում է նրան[11]։ Իսկ աղջկա ծնողները, եթե չէին հավանում տղային, ապա հետևյալ օրը իմաց էր տրվում, որ աղջիկտեսի չգան։

Տղայի կողմի կանայք աղջկա ծնողների կողմից նախապես որոշված օրը, գնում էին պաշտոնական աղջիկտեսի։ Այդ կանանց կարծիքը հաճախ վճռական դեր էր խաղում՝ աղջկա ձեռքը խնդրելու կամ չխնդրելու գործում։

Այդ երկու նախապատրաստական այցելություններից հետո, որոնք ընդհանրապես տեղի էին ունենում առանց փոխադարձ մեծարանքի, տղայի ծնողների կողմից ուղարկվում էին մոտիկ բարեկամներ՝ աղջկա ձեռքը պաշտոնապես խնդրելու համար, դրանք կոչվում էին ռիճաչիներ, այսինքն՝ խնդրարկուներ։

Խնդրարկուների առաջնորդը, որ սովորաբար հեղինակավոր մեկն էր լինում, իսկ Ակնում՝ տաներեց քահանան, խոսք առնելով, ասում էր. «Եկած ենք աստծո հրամանով, հայրապետի կանոնով, ձեր աղջկան (անունը տալով) ձեռքը խնդրելու մեր (օրինակ՝ Աճեմենց Կիրակոս աղայի) տղին»։

Աղջկա ծնողներից հայրը սկսում էր անվերջ առարկություններ՝ «թե պատրաստ չենք», «թե այդ մասին խորհելու համար ժամանակ է հարկավոր» և այլն և այլն։ Այսպես, զանազան պատրվակներից հետո կողմերը խորհելու համար ժամանակ էին պահանջում։ Պահանջված ժամանակամիջոցը ընդհանրապես երկար էր լինում, բայց երկուստեք համաձայնությամբ ղեղջվում էր

[9] Մինաս և Մաոի Մինասյանների հաղորդումից։

[10] Մ. Պալյան, Ամուսնական սովորությունները Կեսարիո մեջ, «Բիւրակն», Կ. Պոլիս, 1900, էջ 344—347։

[11] Նույն տեղում։

11—21 օրվա։ Որոշված ժամանակից մի օր առաջ տղայի կողմից աղջկա ծնողներին լուր էր ուղարկվում, որ վաղը գալու են խոսքկապի, աղջկա հայրը սովորաբար պատասխանում էր՝ «Թող հրամմեն» կամ «այսօր պատրաստ չենք, թող այս ինչ օրը հրամմեն»։ Նախքան տղայի կողմից պաշտոնական ձեռք խնդրելը, որոշված օրը տղայի հայրը իր մոտիկ ազգականներով գնում էր աղջկա հորից պաշտոնապես նրա դստեր ձեռքը խնդրելու։ Այստեղ պետք է նշել այն, որ նախքան տղայի կողմից պաշտոնական ձեռք խնդրելը, փոխադարձ զգուշությունները, ձգձգումները ունեն իրենց արդարացի պատճառները։ Այդ ձգձգումների նպատակն էր ոչ միայն իրար ավելի լավ ճանաչելը, այլև որովհետև մի անգամ արդեն մերժված տղան կամ հավանություն չգտած աղջիկը, ըստ տիրող հասարակական կարծիքի, ամուսնության համար հետագայում որոշ դժվարությունների էր հանդիպում։ Հակառակ կանխավ գոյացած համաձայնության, այս անգամ ևս ըստ սովորության աղջկա ծնողների կողմից զանազան դժվարություններ էին հարուցվում, պահանջվում էր նոր պայմանաժամ։ Բազմաթիվ անտեղի առարկություններից հետո միայն, վերջապես, ասվում էր ավանդական այո-ն։

Առաջին խոսք առնողը ծնկի գալով ասում էր «Հայր մեր»-ը և երեսը խաչակնքում, նույնն էր անում նաև աղջկա հայրը, որից հետո սկսվում էին երկուստեք բարեմաղթությունները, աչքերնիդ, աչքերնիս լուս, խնամի, տարոսը ձեր գավակների գլխին։

Աղջիկը, որ խոսակցության ամբողջ տևողության ժամանակ բացակայում էր, իր մեծ քրոջ կամ եղբոր կնոջ ուղեկցությամբ ներքնասենյակից ներս էր գալիս՝ խնամիների ձեռքը համբուրելու համար։ Իսկ փեսացուն, որ խոսքկապի ժամանակ բացակա էր լինում, կանչվում էր։ Խնջույքը ըսկըսվում էր («բերան անուշության» համար) շերբեթ-ով և տևում էր 3—4 ժամ, այսինքն՝ մինչև ուշ գիշեր[12]։

Խոսքկապը որպեսզի պաշտոնական հանգամանք ստանար, կարգը այնպես էր պահանջում, որ մի օր հետո տաներեց քահանան նոր խնամիների տները գնալով, աղջկա և տղայի գլխին ավանդական «պահպանիչը» պետք է կարդար։

Խոսքկապից ընդհանրապես մեկ շաբաթ կամ, գյուղական որոշ վայրերում, մինչև վեց ամիս հետո, տեղի էր ունենում նշանդրեքը կամ, ինչպես անում էին Ակնում՝ մեծ նշանուքը։ Որոշված օրը տղայի ծնողները, փեսացուն և իրենց մոտիկ ու հեռավոր ազգականները, հարսնացուի ծնողները և նրանց մոտիկ բարեկամները հավաքվում էին աղջկա տանը, որտեղ յուրաքանչյուր սեռ նստում էր առանձին, երկուստեք բարեմաղթություններից, կերուխումից հետո, կես գիշերի մոտերը, փեսացուի հայրը փափագ էր հայտնում, որ իր հարսնացուն ձեռք համբուրելու ներկայացվի։ Աղջկա հոր կողմից, ըստ սովորության, եղած մի քանի ձևական պատճառաբանությունից հետո հարսնացուն մի մոտիկ ազգականուհու առաջնորդությամբ, ներքնասենյակից ներս բերվելով, համբուրում էր կարգով բոլորի աջ ձեռքը, նույնիսկ իր նշանածի ձեռքը, որից հետո ակնածանքով ետ-ետ գնալով, ձեռները կրծքին՝ բարևի էր կենում։ Խնում էին նշանվածների կենաց։ և նրանց գովքն էին հյուսում։

Հարսնացուն նախքան ներքնասենյակ վերադառնալը, որպես հարգանք վերստին համբուրում էր ներկաների ձեռքը, որի ընթացքում, հատկապես Կեսարիայում յուրաքանչյուրը տալիս էր հարսնաաեսի նվերը, ինչպես ասում էին՝ երես տեսնուկը։ Նվերները ընդհանրապես բաղկանում էին զարդոսկիներից՝ զրամիցա, մանմուդիե, դրա կամ դազի, սանտիլը և տասնոց (օննուխ) ոսկի։ Հարսնացուն նվերները մատների միջև այնպիսի մի կարգով էր շարում, որ հեշտությամբ հասկացվում էր, թե ով ինչ նվեր է տվել։ Մի քիչ հետո աղջկա մայրը իր պարագաներով. քաշվում էր մյուս սենյակը փեսային նվեր մատուցելու համար[13]։ Փե-

[12] Գամիրքի գյուղերում ընդհանրապես գործ էին ածվում դհոլ-զուռնա, սրինգ, իսկ քաղաքային վայրերում՝ քեմանչի, ուտ, սազ, գրանիթա, վերջերս՝ նաև ջութակ։

[13] Փեսատեսը Գամիրքի բոլոր շրջաններում նույն ձևով չէր կատարվում, օրինակ՝ էվերեկում աղջկա մայրը մի քանի ծանոթ բարեկամ կանանց հետ գնում էր փեսատեսի և որպես նվեր տանում էր մի մետաքսե թաշկինակ, ակով մատանի, ինչպես նաև մի պնակ մեղր, վրան սեր՝ «բերան քաղցրացնելու համար»։

նացուին ներս կանչելով, տալիս էին, ըստ իրենց նյութական կարողության, աղամանդակուռ կամ հասարակ ակով ոսկի մատանի, ծխախոտի արծաթյա տուփ, սաթե համրիչ, ծխամորճ, ուլունքով գործված ժամացույցի ման, մետաքսե մի թաշկինակ և այլն։

Նշանտուքի խրախճանքները կամ ինչպես ասում էին Ակնում՝ խալվաթին, ընդհանրապես տևում էր ամբողջ գիշերը, խնամախոսները առավոտյան դեմ ցրվում էին «աստված սուրբ պսակին արժանացնե» բարեմաղթություններով։

Նշանդրեքի փաստը, ըստ ընդունված կարգի, պետք էր բոլորին հայտնի լիներ։ Ուստի և տղան ու աղջիկը նշանդրեքի հետևյալ օրից իսկ զարդարվում էին իրենց ստացված նվերներով։ Հարսնացուն, ըստ տեղական ճաշակի, իր զարդոսկիները դասավորում էր կարմիր ծոպավոր ֆեսի առջևի կողմում եռանկյունաձև. կամ զարդարում էր արախշին (թասակ) և որպես մանյակ կախում էր կրծքից, կամ որպես շարոց ծամերի խսիրի վրա և կամ ծամերի հյուսկենների ծայրերին, երբեմն նաև վզին ու ծամերին միաժամանակ։ Իսկ փեսացուն իր միջնամատին կրում էր ակով մատանին։ Այդ զարդերի քանակը կարող էր բազմանալ մինչև ամուսնության օրը, նոր տարվա, ծննդյան, բարեկենդանի, զատկի և այլ տոների առթիվ տրված նվերներով[14]։

Ինչ վերաբերում է նշանդրեքից հարսանիքի միջև ընկած տևողությանը և այդ ժամանակամիջոցում նշանվածների տեսակցության ձևերին՝ դրանք առաջին հերթին իրարից տարբերվում էին ըստ գյուղի և քաղաքի կուլտուր-կենցաղային պայմաններին և տեղական սովորություններին, ինչպես նաև ենթականների ընտանեկան դրությանը։ Օրինակ, եթե գյուղերում նշանդրեքից ամուսնության միջև ընկած ժամանակամիջոցը տևում էր 6 ամսից մինչև մեկ տարի, ապա քաղաքներում նշանախոսությունից հարսանիք՝ երբեմն նույնիսկ մի քանի շաբաթ միայն։ Այդ ժամանակամիջոցը գյուղական վայրերում երկար էր տևում, առաջին, նրա համար, որ ամռան դաշտային աշխատանքներն ավարտվեն և նոր միայն ամուսնության պատրաստություններ տեսնեն, հարսանիքի ուշացումը նշանվածների համար իրար վայելելու մի միջոց էր, քանի որ գյուղական երիտասարդությունը օրինականացած այն ազատությունը չուներ, ինչ որ վայելում էր քաղաքինը։ Գամիրքի քաղաքային վայրերում, հատկապես Ակնում, Արաբկիրում, Սեբաստիայում, ըստ տեղական սովորության, նշանված տղան, ամեն շաբաթ երեկո և տոնական առիթներով այցելության էր գնում. մի քանի ծանոթ ընկերներով. իր նշանածին, ուր մտերմական մի շրջանակի մեջ արժանանում էր ջերմ հյուրասիրության։ «Համեստության ու պատշաճության սահմաններում հրապուրվում իր նշանածի հետ»[15]։ Գալով գյուղացի երիտասարդին, թեև նույնպես առիթը չէր պակասում այգի, արտ, կալ և աղբյուր գնալ-վերադառնալու ժամանակ. իր նշանածի հետ սիրալիր խոսքեր փոխանակել և կամ երեկոյան մթնելուն աղջկա մոր կամ տան մեծ հարսի կարգադրությամբ ընտանիքի մյուս անդամներից գաղտագողի իր նշանածի մոտը երթալ, սակայն, ընկերական շրջանակում, իր նշանածի հետ հրապարակով տեսակցությունը հատկապես տեղի էր ունենում երկանք քաշելու ժամանակ։ Ինչպես հայտնի է, Գամիրքի, հատկապես գյուղական վայրերի կենցաղում ընդհանրացած երևույթ էր աշնան առտնին որոշ աշխատանքների, այդ թվում և ձավար աղալու փոխօգնությամբ (մեջի) կատարումը։ Ուստի և երկանքով ձավար աղալու համար կանչվում էին դրացի, բարեկամ-ազգականի նշանված աղջիկները, իսկ վերջիններս ամեն ջանք թափում էին, որ իրենց ծնողները չմերժեն այդ հրավերը, մյուս կողմից գաղտնի լուր ուղարկելով իրենց նշանածներին, որ իրենք երկանք քաշելու են հրավիրված այսինչ գիշեր, իրենց այսինչ ազգականի տունը։ Երիտասարդները գիշերը գնում, բարձրանում էին այդ տան կտուրի վրա։ Երկանքը սովորաբար տեղավորված էր լինում թոնրաթմբի այն մասում, որը գտնվում էր երդիկի ճիշտ ներքևը։ Այսպիսով, հաղորդակցու-

[14] Տ. Պալյան, Ամուսնական սովորությունները Կեսարիո մեջ, «Բիւրակն», Կ. Պոլիս, 1900, էջ 344—347։

[15] Ա. Քեչյան. Ակն և Ակնցիք, Փարիզ, էջ 258։

թյունը հեշտանում էր։ Անմիջապես, որ ոտքի ձայն էր լսվում կտուրից, գեղեցիկ ձայն ունեցող աղջիկները փոխնիփոխ սկսում էին մեներգել, հատկապես «Երկանքի մանին», իսկ խումբը նրան պատասխանում էր.

Երկանքը մանի, մանի
Օրիմ ո քունդ տանի.
Իս ինչ ըսիմ էն յարին
Չգար իս քովը տանի.
Երդիկը ելելս կուգա,
Դարվար նայելս կուգա,
Եկավ անցավ շան տղան,
Ղատան առնելս կուգա։

Խումբը՝

Դարձրեք աղջներ, դարձրեք
Լուս-յարը մեզ ղրկեցեք,
Չի դառնում, չի դառնում
Լուս-յարը տանիքից չիջնում։
(կրկնությունը թրքերեն)

Տանիքում սպասող երիտասարդներից յուրաքանչյուրը ճանաչելով իր նշանածի ձայնը, չվանով իջեցնում էր մրգեղենով լեցուն կարմիր մահրման (մեծ թաշկինակ)։ Խինդը, ծիծաղը վերևից ներքև համակում էր բոլորին, այսպես, յուրաքանչյուրը սպասում էր իր նշանածի ձայնին։

Երկանք քաշող աղջիկները իրենց հոգեկան հույզերը արտահայտում էին նաև Ըլլայի, ըլլայի կարոտի, պանդխտի երգերով, որոնք լայն տարածում էին գտել, հատկապես 20-րդ դարի սկզբներին՝ գյուղի շերտավորման խորացման հետևանքով, երբ երիտասարդները տարիներով օտար երկրներ աշխատանք փնտրելու էին գնում։

Ըլլայի, ըլլայի
Պեղիրկան ըլլայի բեռդ բանայի,
Սըվըրճըխ ըլլայի վրադ դառնայի,
Լեզուս բալլինք ըլլար սիրտդ բանայի։
Ըլլայի, ըլլայի
Թավսիրճի ըլլայի, թավսիրդ հանեի,
Ամեն կարոտնալուս առչես առնեի,
Վարդի ծառ ըլլայի, դուռդ բուսնեի,
Ամեն առավոտին սրտիդ բացվեի։
Դալղա, դալղա կուգա Պոլիսի ծովը,
Ինչ անուշ կփչե սեվտային հովը,
Տերը նասիպ ըներ, երթայի քովը,
Առնեի մուրատս, ընկնեի ծովը։

Մինչև այդ տան տնտեսուհին, սեղանը պատրաստած, երիտասարդներին հրավիրում էր ճաշի։ Նրանք տանիքից վար իջնելով, սեղան էին նստում։ Դա միակ առիթն էր նշանվածների համար, հատկապես Հալիսի ներքին հովտում, մտերմական յուրահատուկ մի շրջանակում իրար հետ տեսակցել կարողանալու համար։ Բացի այդ, գյուղական վայրերում, ըստ տեղական սովորության, տղայի ծնողներն իրենց մոտիկ ազգականներով հարսնացուին տեսակցության էին գնում, որը Կեմերեկի շրջանի հայ գյուղերում տեբենեկ (հավաքույթ, հարսանիք) էր կոչվում։ Որոշված օրից մի երկու օր առաջ տղայի կողմի բարեկամները ուղարկում էին անպայման մի տապակ փախլավա և վրան անզույգ թվով զաթաեր, իսկ խրախճանքի օրը հարսնացուին տալիս էին նաև եբեստեսնուկի դրամական նվերը։ Ըստ սովորության, հարսնատեսի էին գնում նաև տղայի քույրերը՝ 40 մանկանց տոնին (40 ճրագալույցին), հարսնացուի հետ ըզբոսնելու համար։

Հայկական գավառներում, ընդ որում և Գամիրքում, ինչպես ասվեց, հարսանիքը լինում էր աշնան վերջերին։ Հարսանեկան նախապատրաստման աշխատանքները ընդհանրապես սկսվում էին ամուսնական ծեսից առնվազն երկու շաբաթ առաջ, որը Կեմերեկից դեպի Կեսարիա ընկած հայ գյուղերում կոչվում էր ֆեսի-ֆիչի (կտրումձևում) կամ պազարլըխ կըյել, մինչդեռ Հալիսի վերին հովտում, Սեբաստիայի շրջանում՝ խոսք կտրել։

Խոսքկտրումի համաձայնությունը, ըստ սովորութային իրավունքի, տեղի էր ունենում երկու կողմի հայրերի, ինչպես նաև նրանց մոտակա տարեց ազգականների միջև։ Նրանք համաձայնության էին գալիս հարսանիքի ժամկետի, հարսնացուի հագուստների ու զարդերի քանակի ու որակի, տղայի կողմից նշանակվելիք կնքահոր[18] (քավոր), ինչպես նաև հարսանեկան այլ հարցերի մասին։ Երբեմն պատահում էր, որ խոսքկտրումի ժամանակ ծագած անհամաձայնության հետևանքով նշանախո-

[18] Քավորը (կնքահայրը) ոչ միայն հարսանիքում, այլև նույն ընտանիքի մեջ հետագայում ևս ուներ իր հեղինակավոր խոսքը՝ երեխաների մկրտության, մահվան, ինչպես և բաժանման ժամանակ։

սությունը խզվում էր, սակայն, եթե չկային լուրջ պատճառներ, ընդհանուր առմամբ խորհրդակցությունը համաձայնությամբ էր վերջանում։ Այսուհանդերձ, պետք է նշել, որ ամուսնական սակարկությունը հայերի մեջ դեռ շատ վաղուց կորցնելով աղ ու ծախի իր սկզբնական բնույթը, պահպանվում էր նվիրատվության ձևով։ Ուստի և դլխագինը՝ որպես նշանվելիք աղջկա փոխարժեք, հայերի կենցաղում վերանալով, պահվում էր միայն աղջկան, նրա մորը և եղբորը տրված նվերների ձևով[17]։

Հարսանիքի անհրաժեշտ գնումների կատարումից և անհրաժեշտ ճյուխա ճացի (սաջի հաց) մեծ կաթսայով շամիշե խոշաֆի պատրաստումից հետո միայն սկսվում էր հարսանիքի ծանուցումը։ Մինչ փեսացուի մոտիկ ընկերները։ հարսանիքի տան կտուրից դհոլ-զուռնայով գյուղին ծանուցում էին, որ «հարսանիքը սկսված է», մյուս կողմից՝ տղայի տնից ուրբաթ առավոտից սկսած գնում էին ազգականների տները, որը տուն ձենել էր կոչվում։ Ըստ սովորության, առաջինը ձենում էին հարսնացուի տունը, ինչպես նաև երկու կողմի ազգական հարսնացուներին և թագվորցիներին։ Տուն ձենելու համար որպես նվեր հարսնացուի տունը տարվում էր մի ձեռք յուխա և մի փարիսաճ խոշապ, մի գաթա, իսկ այգեգործական շրջաններում՝ խնձոր և ուրիշ մրգեր։

Հրավիրյալները սկսում էին գալ շաբաթ երեկոյան, և համաձայն իրենց հասակին, սեռին ու դիրքին, պատշաճորեն ընդունվում էին տղայի հոր, փեսայի և կամ տանտիկնոջ կողմից՝ տարեց այր մարդիկ մեծ օդայում, երիտասարդ տղամարդիկ փեսայի օդայում, կանայք մեծ տան քուրսու մոտ, իսկ հարս-աղջիկները՝ սաքուի առաջ դհոլ-զուռնայի չորս բոլորը։

Փես-ընկերների առաջին գործն էր լինում նշանակել մակարպաշին կամ իգիտբաշին, որը Կեմերեկից Կեսարիա կոչվում էր մոմճի։ Երիտասարդներից ամենահարգվածը, ձեռին մի հովվական գավազան, ընկերներով բարձրանում էր հարսանիքի տան կտուրը կամ, տեղի անհարմարության պարագայում, հավաքվում էին տան առաջ մի բաց տեղում։ Երիտասարդների առաջնորդը խոսք առնելով, ասում էր. Ընտրենք մեր թագավորի պաշտպան մոմճին։ Եվ սկսվում էր աճուրդը. ինձմե տասը լիդրե շարապ, մի ուրիշը՝ ինձմե տասը լիդրե շարապ և գառ մը, ինձմե թոխլու մը և կես թենեքե ըրախի. այսպես նրանցից ամենաշատ մատուցողը, ամենաառատաձեռնը ընտրվում էր մոմճի[18]։

Մոմճիի առաջին գործն էր լինում իր հետևորդներով գնալ տղայի քեռու տունը, փեսային «թագավորական հալավը» հագցընելու, իսկ քավորկինը, իր հերթին, մի խումբ հարս-աղջիկներով գնում էր աղջկա տունը՝ հարսնացուին լողացնելու։

---

[17] Տղայի կողմից հարսնացուին տրվում էր մի ղուռնի էնթարի, մի ասեղնաբանված սալթա, մի անեմ շալը, օգ, մատանի և, մորը՝ մի թոփ թիրե, որը կոչվում էր անապեզի, իսկ եղբորը՝ մի զույգ ոտնաման, որպես զարդաշ-յոլը։

[18] Գամիրքում մոմճի (խաչեղբայր), ընֆապապ տերմինների գործածությունը որոշ շփոթություններ տեղիք էր տվել։ Օրինակ, Հալիսի վերին հովտի հայ գյուղերում հարսին որպես պաշտպան նշանակելու հին սովորության վերանալու հետևանքով, «մոմճի»-ն շփոթվում էր փեսամանտիկի (սաղտրճ) հետ, իսկ Հալիսի միջին հոսանքում՝ Կեմերեկից դեպի Կեսարիա, կնքահոր (քավոր), մոմճիի (խաչեղբոր) ներկայության, հարսնեղբոր գերը՝ որպես հարսի պաշտպան, ավելորդ նկատելով, վերածվել էր լոկ մի ծիսական սովորության։ Օրինակ, 8—12 տարեկան տղա, ընդհանրապես քավորի մանչ երեխան, հազվագյուտ դեպքում միայն աղջիկ, փեսամանտիկ (սաղտուճ) էր կարգվում։ Հասկանալի է, հարսի առաջին ծնունդը՝ էռջինեկը տղա լինելու համար նախապատվությունը միշտ տրվում էր մանչերին։

Ինչպես հայտնի է, Արևելյան Հայաստանի գավառներում կնքահայրը կոչվում է քավոր, մինչդեռ Գամիրքում ընդհանրացված էին ընֆապապ (կնքապապ) և կնֆանայր տերմինները։ Մակարբաշին Արևելյան Հայաստանի մեծ մասում կոչվում է խաչեղբայր կամ թագավորցի, իսկ Արևմտյան Հայաստանում՝ մոմճի ազապբաշի, իգիտբաշի։ Պետք է ենթադրել, որ տերմինների այս տարբերությունը հեսանք է հոգևոր կուլտուրայի փոխազդեցություններին։ Օրինակ, քրիստոնեական եկեղեցու ազդեցության տակ իգիդրաշին, մակարբաշին կամ ազապբաշին, որ նախկինում հարս ու փեսան առանգումից պաշտպանելու դեր ուներ, դարձել է խաչեղբայր կամ մոմճի։ Մակարբաշին, երբ հարսի ու փեսայի փոխարեն պսակի ժամանակ խաչ էր բռնում, ապա Գամիրքի որոշ վայրերում խաչի փոխարեն մոմ էր բռնում, ուստի և առաջացել էին խաչեղբայր, մոմճի տերմինները։ Թագվորցի տերմինը փոխաբերական իմաստ ունի։ Ըստ Աստվածաշնչի, եթե փեսան թագավոր է, ապա փեսայի ընկեր-պաշտպան ամուրի երիտասարդը՝ թագվորցի (թագավորացու է), այսինքն՝ նա էլ մի օր թագվոր է լինելու։

Նախքան պսակի խորհուրդը, փեսան պարտավոր էր լոգանք առնել, սափրվել, մարմնով մաքրվել։ Նույն մաքրությունը պահանջվում էր նաև հարսնացուից։ Փեսայի լոգանքի, սափրվելու ժամանակ կատարվում էին որոշակի արարողություններ. և այդ ծեսի ու հարսնացուի «հալավ օրհնելի» և «հալավ հագցնելու» սովորությունը ինչպես հայկական մյուս գավառներում, նույնպես և Դամիրքի հայերի կենցաղում արմատացած երևույթ էր։ Այսպես, փեսան լոգանքից հետո, իր ներքնահագուստը և էնթարին հագած, առաջնորդվում էր այն սենյակը, ուր քահանան պետք է օրհներ «թագավորական հալավը»։ Քահանան օրհնում էր փեսայի սալթան (հերմանեն), գըլխարկը և քավորի սուրը, որոշ վայրերում միաժամանակ նաև հարսի հալավը։ Ինչպես փեսայի հինադրեքի, նույնպես և հալավ հագցնելու ժամանակ տեղի էր ունենում աճուրդանման մրցում։ Ամենաշատ փող նվիրողը արժանանում էր փեսա հագցնողի պատվին։ Ըստ ավանդական սովորության, փեսա հագցնողը հալավի յուրաքանչյուր կտորը նախքան հագցնելը երեք անգամ փեսայի գլխի վերև շուրջանակի դարձնում էր (այստեղ ակներև է փեսայի համար աստվածային երրորդության զորության հայցումը), որին փեսընկերները բոլորը միաբերան երեք անգամ թագավոր շնորհավոր էին կոչում։ Այնուամենայնիվ, յուրաքանչյուր շրջան ուներ բարեմաղթությունների և երգերի տարբեր փոփոխակներ։ Օրինակ, Հալիս գետի վերին հովտի հայկական գյուղերում՝ պոճոռ, պոճոռ[19] էին կանչում և շնորհավորում էին, թագավոր վանաց շանի ասելով։ Իսկ վերին Եփրատի շրջանում, հատկապես Ակնում, երեք անգամ ասված շնորհավոր ընե բացագանչելով, երգում էին հետևյալը.

«Ահա բարձր լեռներն ի վար,
Մեզի բարակ արև մըն է ծաթեր
Ամենուն երդիկն ի վար,
Մեզի դուռն ի ներս է ճառագեր,
Ամենդ ի վար եկեք,
Թագավորին կապան կապեցեք,
Լուսնկան աստառ արեք,
Արեգակն երես ձևեցեք,
Ան մոյ ու խոշոր աստղեր,
Թևերուն տյուկմե կապեցեք»։

Ակնում տեղական սովորության համաձայն, երբ տղայի հայրը. իր որդու՝ փեսայի գլխին թագ (ծոպավոր ֆես) էր դնում, այդ վայրկյանից միայն նա թագավոր էր համարվում։

Փեսայի թագավորական հալավին հաջորդում էր պարերով ուղեկցվող խրախճանքն ու կերուխումը։ Փեսան և փեսընկերները, ազապբաշիի (մոմճիի) գլխավորությամբ, ընդհանրապես «Հոդալո ջան» երգելով պարում էին հալայը՝ կլոր պարը։

Հոդալո ջան, հոդալո,
Կոզլեր շիրին, մարալո ջան, մարալո,
Հով, հով, հով լինի,
Ցարս քեմարով լինի,
Ցարիս տունը ծով լինի,
Դե զանենք, զանենք թոզը հանենք,
Ջար դուշմանին կոզը հանենք։

Փեսա հագցնելու արարողությանը հաջորդում էր հացկերույթը, տեղական բարբառով՝ ճաց թափել-ը, որի ավարտին քեռին կամ քավորը, որ փեսա հագցնող-ի դերում է գտնվել, ըստ սովորության, փեսային որպես նվեր, տալիս էր գոմշի ձագ կամ մի հորթ, ուլ կամ գառ։

Խումբը դհոլ-զուռնայի նվագակցությամբ. դեպի փեսայի տունն ուղևորվելիս, ճանապարհին անպայման պետք է անցներ հարսնացուի տան առջևից և փեսընկերները բոճո՜ռ կամ ըստ տեղի սովորության վանա՜ռ, վանա՜ռ[21] ուրախ բացականչություններով հասնում էին փեսայենց տուն։ Այստեղ հարսանեկան խրախճանքը շարունակվում էր մինչև ուշ երեկո։

Փեսային հագցնելու արարողությանը համընթաց աղջկա տանը տեղի էր ունենում նաև հարսնացուն հագցնելու և հնադրեքի արարողությունը։ Վերոհիշյալ արարողու-

[19] Սերաստիայի շրջակա գյուղերից Խորանայում «բոճոռ» էին կանչում, իսկ Կովառն գյուղում՝ վանառ։ Տե՛ս Վ. Համբարձումյան, Գյուղաշխարհ, Փարիզ, 1927։

[20] Ա. Քեչյան. Ակն և Ակնցիք, Փարիզ, 1952, էջ 259։

[21] Պոճոռը վանառի աղավաղված ձևն է՝ Վ. Թ.։

թյունների համար, թեև Գամիրքի բոլոր շրջաններում մի ընդհանրություն գոյություն ուներ, սակայն յուրաքանչյուր շրջան ուներ նաև իր տեղական առանձնահատկությունները։ Օրինակ, Հալիսի վերին հովտում, Սեբաստիայի շրջակա հայ գյուղերում, ինչպես ասվեց, երբ մակարբաշին կամ մոմճին գնում էր «փեսան հագցնելու», մյուս կողմից ընեմերը (քավորկին), մի խումբ հարս ու աղջիկներով, իր հերթին գնում էր հարսնացուին հագցնելու։

Հարսնևորները (յենկե) դհոլ-զուռնայի նվագակցությամբ, թափորի առջևից գնում էր մի պատանի, ավանդական խոնշան[22] երկու ձեռներով գլխից վեր բռնած։ Խումբը, ճանապարհին երգելով և մեջընդմեջ ղալանի ճե՛յ կանչելով, առաջանում էր դեպի աղջկա տունը։

Հարսնետան դռան առաջ երկու հարսնաքույրեր հարսնևորներին բարի եկաք մաղթելով, ներս էին հրամցնում, որին քավորկինը պատասխանում էր՝ աչքերնիդ, աչքերնիս լուս։

Ի պատիվ հարսնեորների, հարսնաքույրերը ձեռքերին մեկ-մեկ կարմիր թաշկինակ, թևանցուկ, դհոլ-զուռնայի նվագակցությամբ պարում էին և թամզարա երգում.

Լե, լե, լե, լե, թամզարա,
Լև, լե, լե, լե, թամզարա,
Աղջիկ դուն ինձ յար կըլնե՞ս,
Դարգերուս դարման կըլնե՞ս.
Լե, լե, լե, լե, թամզարա (կրկնել)
Ելնենք երթանք թամզարա,
Ինչ որ կուզես հաղր կա,
Լե, լե, լե, լե, թամզարա (կրկ.)
Աղջիկ մաղերդ թուխ է,
Էս ինչ բարութի մուխ է.
Լե, լե, լե, լե, թամզարա (կրկ.)
Մուխ հանողը քոռանա
Ինձի քեղի մոռանա։

Հարսնևորների պատասխան պարից հետո, քավորկինը խնդրում էր, որ հարսնացուն ներկայացվի։ Հարսնացուն գլխին վարդագույն մի քող գցած, հարսնաքույրերի կողմից թևանցուկ բերվում էր թոնրաթմբի (սաքուի) վրա։ Քավորկինը նրա քողը վերցնելով, փոխարենը գլխին ձգում էր փեսայի կողմից ուղարկված փլփլավոր ճինդիճ, իսկ հարսի եղբայրը քրոջ գոտին էր կապում, ասելով՝ օխտը ինձի պես, մեկը՝ քեզի պես։ Մինչդեռ դհոլ-զուռնան թոնրաթմբի մոտ նվագում էր շեն անամ-ի[23] տխուր մելոդիան, հարսնացուն քավորկնոջ, հարսնաքույրերի և հարսնևորների ուղեկցությամբ երգելով առաջնորդվում էր լողարան։

Հարսնացուին լողացնելու ամբողջ ընթացքում, հարսնաքույրերը երգելով, նրա գովքն էին հյուսում, իսկ լոգանքի վերջում, ըստ ավանդական սովորության, հարսնացուի ուսերից ցած վարդաջուր էին շաղ տալիս[24], որի բուրմունքը մնում էր առագաստից հետո մինչև առաջին բաղնիքը։ Հարսնաքույրերը, տարոսի համար, նույն վարդաջրից խմում էին մեկ-մեկ ումպ։

Այսպես, մինչև ամուսնական պսակը կատարվում էին մի շարք ծեսեր և արարողություններ, որոնք հանդիսանում էին նոր ամոլներին բախտավորեցնելու նշանակություն ունեցող հմայամոգական գործողությունների վերապրուկներ։ Ծիսական այդ արարողությունները Գամիրքի բոլոր շրջաններում հար և նման չէին։ Օրինակ, Հալիսի միջին հոսանքի հայկական գյուղերում՝ Կեմերեկում և դրա շրջակա գյուղերում հարսնացուին հնայելու արարողությանը տղամարդիկ չէին մասնակցում, մինչդեռ Ակնա շրջանում դա հանդիսանում էր երկու սեռերի համար ամենախորհրդավոր և միաժամանակ հաճելի ժամանցներից մեկը։ Կեմերեկի գյուղերում հարսնացուն լոգանքից հետո, հարսանեկան հագուստները հագցրած, գլխին կարմիր փլփլավոր քող, հարսնաքույրերի կողմից առաջնորդվում էր թոնրաթմբի վրա, հատուկ պատրաստված

---

[22] Սովորաբար լինում էին՝ մրգեր, շաքար, մեկ շիշ օղի, մետաքսյա կարմիր քող և հինա։

[23] Շեն անամ, ժողովրդական բանահյուսությունը Հալիսի ստորին հովտի հայ գյուղերում՝ Կեմերեկից-Կեսարիա երգվում էր թուրքերեն, իսկ վերին հովտում, նույն բովանդակությամբ, բայց հայերեն.

Շեն մայրս, շեն մայրս տունդ շեն մնա,
Ես գնում եմ ահա, տունդ շեն մնա։

[24] Հարսնացուի մարմնի վրա վարդաջրի շաղ տալը ուներ իր սիմվոլիկ նշանակությունը, այսինքն՝ նոր ամոլները կյանքը պետք է դիմավորեն բուրմունավետ վարդի քաղցրությամբ։

տեղը։ Ըստ սովորության, հարսնացուն երեք անգամ նստեցնել կանգնեցնելուց հետո, նստեցվում էր նախշված բազմոցով մի աթոռակի վրա, այնպես որ նա իր ղիրքով թոնրաթմրի վրա նստողներից ամենից բարձրն էր լինում։ Քավորկինը հարսնացուի ափի մեջ մի պտղունց օրհնված հինայի փոշուց խյուս պատրաստելով, դրա մեջ զետեղում էր մի դրամ, և կանչում մի պատանու, որպեսզի հարսնացուի ափի միջից դրամը վերցնի։ Տղա երեխայի միջոցով հարսի ափի միջից դրամը վերցնելու և հարսնեղբոր կողմից մեջքի գոտին կապելու գործողությամբ, հարսնացուի համար հայցվում էր սերունդը շարունակող արու զավակներով բեղմնավոր կյանք։

Հարսնևորները օրհնված հինայից մի մաս վերցնելով, վերադառնում էին տղայի տունը՝ փեսան հինայելու համար։ Փեսայի ձեռքի հնայման համար սովորաբար աճուրդ էր բացվում[25]։ Այդ պատիվը մնում էր ընդհանրապես ամենաշատ գումար առաջարկողին, որի ժամանակ հատկապես փեսընկերները մրցման էին հրավիրում՝ իրենց ծանոթների ձեռքը նույնպես հնայելու համար։

Հալիս գետի ստորին հովտի հայ գյուղերում, հատկապես Կեմերեկում, հինադրեքի օրը՝ շաբաթ գիշերը տեղի էր ունենում նաև ֆինա ասկրելու արարողությունը։ Փեսան կես գիշերի մոտերը, մոմճիի (խաչեղբոր) ընկերակցությամբ գնում էր հարսնատունը։ Հարսնացուն կանխապես որոշված մի վայրում իր ամուսնացած քրոջ կամ եղբոր կնոջ հետ սպասում էր փեսայի գալըստյան, որտեղ փեսան և հարսնացուն առանձնանալով տան մի անկյունում, ողջագուրվում էին։ Փեսան համբուրելով հարսնացուի աչքերը, իր հնայված ձեռքը նրան էր երկարում, որ հինայի թաշկինակը քանդի և ասում էր. Էոջի սեռս դուն իս, իսկ հարսնացուն համբուրելով իր նշանածի ձեռքը, թաշկինակը քանդում և պատասխանում էր՝ Էոջին եղ ոr աչխս պղտոr բանամ, ֆեզ պրտ ոr տեսնամ։

Մոմճին և հարսնաքույրը, որ սպասում էին դռանը, կատակով իմացնում էին, որ երկայն եղավ, որի վրա փեսան ու հարսնացուն անմիջապես սենյակից դուրս էին գալիս։ Հարսնաքույրը շնորհավորելով նրանց, ասում էր՝ մեկ բարձի վրա ծերանամ, երկուստեք բարեմաղթություններից հետո փեսան և մոմճին վերադառնում էին հարսնըքատուն, որտեղ խրախճանքը շարունակվում էր մինչև առավոտ։

Պետք է ենթադրել, որ ֆինան ասկրելու ծիսական արարողությունը նախքան կուսության սավան-ի ընդհանուրի առաջ ցուցադրությունը. ուրիշ բան չէր նշանակում, եթե ոչ հարս ու փեսայի կույս լինելու խոստովանությունը, փոխադարձ սիրո և հավատարմության երդում։

Ակնում հարսի հինադրեքի խրախճանքին, ըստ ընդունված սովորության, մասնակցում էին և տղամարդիկ և կանայք։ Քավորը և քավորկինը, բռնած բյուրեղյա նախշուն մի ափսե, որի մեջ բրգաձև դիզված էր լինում հինան, կենտրոնում թաղված՝ սպիրալաձև ոլորված մոմի խուրձ[26], առաջանում էին դեպի սրահի կենտրոնը։ Նվագի հետ դեռատի հարսներ և աղջիկներ, քավորի և քավորկնոջ շուրջը բոլորված, սկսում էին երգել։

Աս հինան ան հինան չէ
Ղրկողն ալ ինչ աղվոր մանչ է։

Խրախճանքի ընթացքում հարսնացուն հարսնաքույրերի կողմից ներքնասենյակից առաջնորդվում էր սրահի կենտրոնը և մի բարձի վրա նստեցնելով, սկսում էին հինայելու արարողությունը։

Մինչ հարսնացուի մատները հնայում էին, հարսնաքույրերը երգում էին.

Ոսկի ամանի մեջ հինաս շաղեցին,
Արծաթե սանտրով խոպոպս քակեցին...

Հինադրեքից հետո սկսվում էր դեմառդեմ թեպարը, ուր պարող զույգերը պատշաճության կարգով այնպես էին իրար հաջորդում ու փոփոխվում, որ հարսնացուն,

---

25 Այդ աճուրդից գոյացած գումարը հատկացվում էր եկեղեցուն և դպրոցին։

26 Մոմի խուրձը՝ հավանաբար Աստվածաշնչի բոցավառվող մոմերը հիշեցնող և նրա խորհուրդը արտահայտող մի նշան էր, դեռևս ավելի հնուց եկող, քան Աստվածաշնչին ծանոթանալը։

անկախ իր կամքից, գտնվում էր իր փեսացուի դեմ։

Այդ միջոցին հանդիսականների կեցցեների ու ծափերի տարափի տակ հռչակվում էր նրանց ընտանեցումը[27]։

Այսպես, հայկական հարսանեկան բոլոր հին ծեսերն ու արարողությունները դեռևս պահպանվում էին Գամիրքի բոլոր շրջաններում, արարողությունների որոշ կողմերով տարբերվելով իրարից։ Օրինակ, գյուղերում, հարսնացուի հինադրեքից հետո, հարսնևորները նախքան փեսայի տուն վերադառնալը հանդիսատես էին լինում օժիտի ցուցադրությանը, այլ խոսքով՝ կանչին։

Հարսնաքույրերը օժիտի սնդուկը բերում էին քուրսիի մոտ։ Նրանցից ամենատարեցը, որը սովորաբար լինում էր հարսնացուի մոր կողմի ազգականներից մեկը, բաց անելով սնդուկը, սկսում էր բացականչությամբ մի առ մի ցուցադրել ինչպես աղջկա հարսանեկան շորերը, նույնպես և հարսնացուի ստացած և տանելիք նվերները։ Ընքեմերեն քոփ մը դուտնի, շեն մնա։ Շեն մնա, ձայնակցում էին հարսնաքույրերը և այսպես բոլոր նվիրատուների հասցեին շեն մնա կանչելով, ցուցադրվում էր օժիտը[28]։ Օժիտ-տեսից հետո հարսնևորները, ըստ սովորության, տարոսը տունը տանելու համար չէին մոռանում նաև հարսնատնից գողանալու զանազան իրեր։

Հարսնառը, որ ամուսնական հանդեսի երրորդ արարվածն էր հանդիսանում, հմայա-մոգական արարողությունների, ծեսերի վերապրուկներով ամենահարուստն էր։ Հարսնառը Գամիրքի բոլոր շրջանների համար. մի ընդհանրություն ունենալով հանդերձ, ուներ նաև տեղական առանձնահատկություններ, կատարման ձևերի բազմազանություն։ Այդ ամենը շրջանից շրջան տարբերվում էր, հատկապես, երբ հարսնառը կատարվում էր մի գյուղից մյուսը։

Հարսանիքը, երբ տեղի էր ունենում միևնույն վայրում, հարսնառի (ենկե) կազմի մեջ մտնում էին փեսան և մակարները, քավորը և քավորկինը, ինչպես նաև չափահաս ամուրի ու նշանված աղջիկներ և նորահարսներ։ Առաջինները գլուխներն ու դեմքերը բաց, իսկ վերջինները՝ շար-ով ծածկված։ Մինչդեռ մի գյուղից մյուսը հարսնառին մասնակցում էին մեծ մասով տղամարդիկ։ Այս վերջին դեպքում հարսնևորները, որ ձիավոր էին լինում, գյուղին մոտեցած, օգի մեջ հրացանների համազարկերով գյուղի վրա հարձակում էին գործում, իսկ գյուղի գլխավոր մուտքը տեղացի երիտասարդների կողմից պարաններով փակված էր լինում։ Ճանապարհ տալու համար պահանջվում էր ավանդական նվերը՝ յոլ։ Ազատ մուտք էր տրվում այն ժամանակ, երբ քավորի կողմից տրվում էր պահանջված նվերը։

Հարսնևորների թափորը, քավորի և մակարբաշիի գլխավորությամբ, հաղթական տեսքով մտնում էր գյուղը[29] և մինչև հարսնետունը հասնելը դհոլ-զուռնայի նվագակցությամբ, ուրախության բացականչություններով ու համազարկերը թնդացնում էին ամբողջ գյուղը։ Հարսնետան մոտերքը հասնելով, մակարբաշին (խաչեղբայրը) բոմ՝ բոմ՝ գոռալով, արագընթաց ձիարշավով հարսնետան դռան առաջից, կրկին ետ էր դառնում, դիմավորելու համար հարսնևորներին։ Այստեղ էլ հարսնետան մուտքն էր փակ լինում, բայց այս անգամ տան դռները փակվում էին ոչ թե համայնքի երիտասարդության, այլ նույն գերդաստանի մոտիկ-ազգականների կողմից։

Քավորը այստեղ ևս դրամական մի նվեր տալով կամ յոլնառայրմ ասելով, դռները բացել էր տալիս։ Բակում հարսնևորներին դիմավորում էին աղջկա ծնողները, մոտա-

---

[27] Ա. Քեչյան. Ակն և Ակնցիք, Փարիզ, 1952, էջ 219։

[28] Գամիրքի գյուղական վայրերի օժիտի մեջ սովորաբար լինում էր 10 շապիկ, 10 շապկընկեր, 10 գոգնոց (երկու տեսակ, մի մասը՝ բարակ, նուրբ, մյուս մասը՝ սովորական), մի ալ-կարմիր գոգնոց չուխայից (մահուդից), մի էնթարի կեսարական ալաճայից, արծաթոսկեթել ասեղնագործված սալթա, մեկ կամ երկու Կյուրինի կամ, ինչպես կոչվում է՝ բողշա-շալ, բրդից հյուսված նախշուն գուլպաներ, օղեր, մատանիներ և անպայման մի արծաթ գոտի։ Տանելիք նվերների մեջ կեսրոջ համար լինում էր մի գոգնոց, մեկ նախշուն բռնօղակ, մի թաշկինակ, կեսրարի համար՝ շապիկ, վարտիկ, մի զույգ նախշուն գուլպա, անձեռոց (երեսսրբիչ), տագրերից յուրաքանչյուրին՝ մեկ շապիկ և այլն։

[29] Հարսնառի ծիսական արարողության մեջ զինված հարսնևորների բոնի գյուղ մտնելու փորձը-ինքնին ուրիշ բան չի ներկայացնում, եթե ոչ հնագույն ժամանակների կանանց առևանգման երևույթի վերապրուկը։

կա բարեկամները, հարսնեքույրերը։ Խաղացվում էր ավանդական խոնչան, որին հաջորդում էր տղամարդկանց շուրջպարը (հալայ), իսկ կանայք դեմ առ դեմ զույգ-զույգ պարում էին շատալար-ը կամ երկ-երկու հոգով թևանցուկ՝ թամզարան։

Պարերից հետո հարսնևոր տղամարդիկ հյուրասիրվում էին օդայում, իսկ կանայք՝ թոնրատանը։ Օդայում աղջկա կողմը հարսնևոր տղամարդկանց հետ մրցում էր հանելուկներով, շուտասելիքներով, աշուղնամեներով և որոշ շարշարանքներով, մինչդեռ թոնրատանը թաքստոցից գտնված հարսնացուի գլուխը հարդարում էին[30], պատրաստում տանելու։

Հարսի հարդարանքը ավարտելուց հետո դհոլ-զուռնան սկսում էր նվագել հայտնի Տանում են մելամաղձոտ եղանակը։ Աղջիկը իր վերջին հրաժեշտի ժամանակ, հուզված, ողջագուրվում էր ծնողների հետ։ Մայրը, աղջկա գովքն անելով, լալագին երդ էր հորինում՝

Եկուր նայեմ, յավրուս եկուր,
Մանչ կարծեցի աղջիկ է եղեր,
Ուրիշի աղջիկը ըլլեյիր
Իմ մոտս հարս ըլլեյիր։
Տունիս համը աղջիկս,
Աղամանին աղը աղջիկս,
Մերդ թողեր կիյաս կա,
Մեծ տունին սյուսը աղջիկս[31]։

Հարսնևոր կանայք աղջկա լեզվով պատասխան խաղ էին ասում.

Մի լար մայրիկ, մի լար մայրիկ,
Իս մի լացներ,
Եկած դավուլ-զուռնաներս
Ետ մի դարձներ։

Հարսնացուն հրաժեշտի պահին համբուրում էր իր մորը և տարեց կանանց ձեռները, նույնն էր անում նաև փեսան։ Ջոքանչ մայրը, փեսային համբուրելով, ասում էր՝ խերը տեսնես և նրա վզին կապում էր փեսայի ավանդական կարմիր ալ-ֆեֆյեն (ուսկապը), իսկ փեսամանտիկի (հարսնեղբոր) վզին՝ մի ավելի փոքրը։

Հարսնաքույրերը հարսնացուի թևերը մտած, առաջնորդում էին մեծ տան դռան առաջ, որտեղ շարքով սպասում էին աղջկա հայրը, եղբայրները, հորեղբայրները, քեռիները և ուրիշ մոտիկ բարեկամներ։ Հարսնացուն համբուրում էր նրանց յուրաքանչյուրի ձեռքը, որոնք դրամական նվերներ՝ խարշլըխ (ծախսի փող) էին տալիս իրենց աղջկան։ Այդպես նրան թևանցուկ արած առաջնորդում էին մինչև բակի դռան առաջ և խերը տեսնեմ ասելով, հանձնում հարսնառի ղեկավարին։

Քավորը, մակարբաշին ընդունելով հարսին, նստեցնում էին զարդարված ձիու վրա և առաջնորդում եկեղեցի։ Հարսանեկան թափորի առջևից գնում էր դհոլ-զուռնան, հարսի մի կողմից քայլում էին փեսան, փեսամանտիկը և քավորը, մյուս կողմից ազապ բաշին (մոմճի) և ազապները (մակարներ)։ Հարսի խմբի ետևից համրաքայլ քայլում էր մակարների արհեստական ուղտը, իսկ հարսնևոր կանայք, քավորկնոջ գլխավորությամբ գնում էին թափորի ետևից։ Մինչդեռ երկու մակարներ, իրը թե արար՝ դեմքերը սևով մրոտած, այլանդակ հագուստներով և մատներին բոժոժներ, որպես խափշիկ վհուկներ, վոն, վոն կանչերով, թափորի երկու կողմերից ետ ու առաջ էին վազվզում. և բոժոժները շղկրտացնում. վանելու համար աներևույթ չարքերին, որպեսզի ամուսնացողներին չվնասեն։

Հարսանեկան թափորը հասնում էր եկեղեցու դռան առաջ, որտեղ միայն այդ ձայները դադարում էին։ Հարսին ցած էին իջեցնում ձիուց, մեկ թևից քավորկինը, մյուսից փեսան բռնած, քավորը և փեսամանտիկը առաջանում էին մինչև եկեղեցու դասի առաջ։ Այստեղից պսակող քահանան հարս ու փեսին և փեսամանտիկին առաջնորդելով դասից ներս, հասցնում էր սեղանի առաջ և այստեղ հարս ու փեսին կանգնեցնում իրար դիմաց, գլուխ-գլխի և նարոտը կապելով նրանց գլուխներին[32], խոր-

---

30 Հարսի գլխի հարդարանքը բաղկանում էր ընդհանրապես ոսկե գլխարկից և մի կարմիր փլիսավոր քողից։

31 Կեմերեկից Կեսարիա ժողովրդական երգերը թրքերեն էին լինում։

32 Մինչդեռ կարմիր-կանաչ թելերով հյուսված այդ նարոտը Արևելյան Հայաստանում կապում էին հարս ու փեսի վզին։

հրդավոր հանգույցն էր անում։ Իսկ փեսամանտիկը, այսինքն՝ սաղաուլը նրանց գլխին բռնում էր խաչը։ Արաբկիրի շրջանում պսակի արարողության ժամանակ քավորը հարս ու փեսի գլխավերև բռնում էր նաև մի կեռ սուր[33]։ Երբ քահանան սկսում էր պսակի արարողությունը, քավորը և քավորկինը, որպեսզի չարքեր-ը փեսին չկապեն... իրենց գրպաններում բացված փոքր կողպեքը և կամ գանակը փակում էին, չմոռանալով սակայն վերստին բաց անել նախքան առագաստի գիշերը։

Պսակի արարողությունից հետո հարսանեկան թափորը վերադառնում էր հարսանեկան տունը, նախօրոք որոշված ճանապարհով, նույն կարգով ու ձևով։ Այդ ճանապարհը պետք է անցներ ինչպես աղջկա ծնողների, նույնպես և քավորի ու ծանոթ բարեկամների տների առաջից։ Սա հարսանեկան անխախտ ծեսերից մեկն էր համարվում, որի ընթացքին ազգականները նվեր էին տալիս հարսին։

Գամիրքի գյուղական վայրերում, ընդունված սովորության համաձայն, հարսանեկան թափորի ժամանակ աղջկա հայրը, որպես նվեր, տալիս էր մի անասուն (կով, երինջ, հորթ, ոչխար կամ գառնուկ), իսկ տղայի ազգականները, իրենց հերթին, կերպասեղեն և չթեղեն նվերներով զարդարում էին հարսի երկու թևերը և ձիու վիզը։ Մինչդեռ քաղաքային վայրերում, հատկապես Արարկիրում, բարեկամներն ու ծանոթները հարսնևորների ճանապարհին ըմպելիքի սեղան էին հանում, իսկ շրջակա գյուղերում, հատկապես Անջրդի գյուղում, հարսի գլխին խնձոր և բոով մանր դրամ էին տեղում։

Հարսանեկան թափորը, երբ հասնում էր իր վերջին հանգրվանը, այսինքն՝ հարսնատունը և կանգ առնում դռան առաջ, քավորը խոսքը տղայի ծնողներին ուղղելով, ասում էր՝ ճարսը ձիուց վար չի իջնում, իր նվերն է (յոլը) պահանջում։

Կեսրայրը համաձայն իր նյութական կարողության և զբաղմունքին, խոստանում էր կաթնատու մի անասուն, կամ մի զարդոսկի, կեսուրը՝ իր հարսնության ապարանջանը, մատանին կամ արծաթ գոտին։ Հարսը դեռ ձիու վրա, տան բոլոր անդամները՝ ամենատարեցներից մինչև դեռատիները, միասին պարում էին թագավորի ու թագուհու առաջ։ Այսպիսով, տնեցիները իրենց հավանությունն ու ուրախությունն էին արտահայտում տան մի նոր անդամի (հարսի) ավելացման համար։

Կեսուրը տնեցիների զգացումներին որպես թարգման, հարս ու փեսին ուղղված խաղ էր ասում.

Երկու ֆիտան ժամուց կուգան,
Առնենք, ելլանք վերի օդան,
Նազ ըրե, նազդ վերցնեմ,
Ալադով[34] շաքար կերցնեմ։

Հարսը, երբ կեսրոջ հրավերի վրա ձիուց վայր էր իջնում, նախքան տան շեմից ներս մտնելը, կատարվում էին նույնպես ծիսական որոշ արարողություններ։ Օրինակ, մակարներից մեկը, որպես առատության խորհրդանիշ, տան կտուրից վայր էր նետում մրգեղենով, շաքարեղենով լեցուն մի բզուկ, որը փշրվում էր հարսի ոտների առաջ։ Տան օջախի պաշտպան ոգիների օգնությունը հայցելու համար, հարս ու փեսի ոտների առաջ ընդհանրապես մի աքաղաղ էին զոհաբերում, իսկ Արարկիրում մակարները եղջյուրներին վառած մոմերով ու վզին կարմիր ժապավենով զարդարված մի խոյ, իրենց ուսերի վրա թագավոր ու թագուհու առաջ պարելուց հետո, զոհում էին։ Այսպես յուրաքանչյուր շրջան, ըստ իր տեղական սովորության և յուրաքանչյուր տնտեսության, ըստ իր նյութական կարողության, մատաղ էր անում մի աքլոր կամ մի խոյ։ Հալիսի միջին հովտի գյուղերում տան շեմքի վրա, հարսին մատուցվում էր մեղր ու կարագով եղանուշ, որպես խորհրդանիշ ընտանիքի անդամների միջև բարի հարաբերության ու համերաշխության։ Հարսը մատը թաթախելով եղանուշին, խաչանշան էր անում դռան սեմի ճակատին, իսկ եղանուշի պնակը որպես տարոս տալիս էր մակարբաշուն (աղապպաշուն), որի ձեռքից իսկույն խլում էին ամուրի երիտասարդները՝ տարոսին ավելի շուտ արժանանալու համար։

---

[33] Տե՛ս «Ոսկեգետակ», տարեգիրք, Բեյրութ, Բ. տարի, 1946, էջ 208։

[34] Ալադ տաՀկերեն բառ է, նշանակում է գործիք, փոխաբերաբար՝ ունելի։

Տան շեմքի վրա. կեսուրը համբուրելով հարսին ու իր տղային, ասում էր. «Հարսս, ուրդ երջանկաբեր, գլուխդ բախտավոր լինի»[35]։ Մինչդեռ Ակնում, հարսն ու փեսան տան շեմքից ներս մտնելու ժամանակ հարսի կեսուրը և կնքամայրը (քավորկինը), իսկ Արաբկիրում՝ տղայի հայրը և մայրը, կամ, հոր բացակայության դեպքում, տղայի մայրը և քավորը իրենց թևերով կազմած կամարի տակից անց էին կացնում հարս ու փեսին՝ ի նշան հնազանդության[36]։

Ուշադրության արժանի են նույնպես տան շեմից ներս կատարված ծիսական արարողությունները։ Կեմերեկում հարսը թոնրաթմբից վեր բարձրանալու ժամանակ, նրա ոտնամանի մեջ ձգվում էր մի դրամ և կանչում մի տղայի և ոչ աղջկա, որպեսզի հարսի ոտնամանը հանելով, միշտ դրամը առնի, որպեսզի հարսի առջևեկը տղա լինի։ Տղա զավակ ուզելու բաղձանքը Գամիրքի, հատկապես Սեբաստիայի շրջակա հայ գյուղերում արտահայտվում էր նաև մի այլ ձևով։ Տան շեմքից ներս, հարսնևոր բազմազավակ մայրերից մեկը, ձեռքին խնկամանը բռնած, երեք անգամ հարս ու փեսի շուրջը պտույտ կատարելով, որպես բարեմաղթանք, փեսային ասում էր՝ օխտը ֆեգ պես, մեկը ինձի պես[37], իսկ Կեսարիայի շրջակա գյուղերից Էվքերեում, հարսը հագցընելու ժամանակ մի դեռատի տղա կամ հարսի եղբայրը գոտին կապելով, ասում էր. յոթը տղա, մեկ աղջիկ[38]։

Որպես մանչ զավակ ունենալու բաղձանքի նշան, հարսնաքույրերը (յենկեները) Թոնուզ գավառակի հայկական գյուղերում՝ Գարակոլից մինչև Ուլաշ, կարմիր աքաղաղի պոչի փետուրներից երեք ունչ ամրացնում էին իրենց գլուխների հարդարանքին։

Հարսը թոնրաթմբի (սաքու) վրա իր համար նախօրոք պատրաստված տեղը գրավելով, ըստ ավանդական սովորության, պատին կռթնած, ոտքի վրա, ձեռքերը կրծքին, մինչև երեկո պետք է բարև բռներ։ Այդ վայրկյանից, նա որոշ ժամանակով կորցնելու էր խոսելու իր ազատությունը, մինչև մայր դառնալը, որպես հարգանքի նշան, պետք էր մուշլ կենար և ճաշելու ժամանակ բերանի առաջ թաշկինակ բռներ։

Պսակի առաջին օրը, մինչև երեկո տևող խրախճանքներից հետո, երբ աղջկա կողմի խնամիները մեկնում էին, նրանց հետևում էին նաև փեսայի հյուրերը, իսկ մնացողները՝ փեսան իր ընկերներով և հարսը հարսնաքույրերով, առանձին սենյակներում գիշերում էին, հանգստանում։ Մյուս օրը առավոտյան վերսկսվում էր հարսանեկան ուրախությունն ու կերուխումը, որը, ըստ սովորության, կատարվում էր ավելի նեղ մի շրջանակում։ Առավոտյան հացկերույթի գլխավոր ճաշը լինում էր խաշը կամ, ինչպես Գամիրքում ասում են՝ փաչան, որի պատճառով այդ օրը, այսինքն՝ նախքան առագաստը, կոչվում էր խաշի կամ փաչայի օր[39]։

Առագաստից առաջ, երեկոյան տեղի էր ունենում նարոտի քանդումը։ Տաներեց քահանան քավորի, քավորկնոջ, խաչեղբոր, հարսնեղբոր, տղայի ծնողների և նրանց մոտակա բարեկամների ու ազգականների նեղ շրջանակում, հարս ու փեսային գլուխգլխի դնելով, օրհնում է նարոտը և ապա քանդում այն ճանգույցը, որ կապել էր պսակի արարողության ժամանակ։ Իսկ քավորը և քավորկինը իրենց հերթին. վերստին բաց էին անում այն դանակը կամ փոքր կողպեքը, որ փակել էին պսակադրության ժամանակ, որպեսզի փեսան կապված չմնա։

Ընտանիքի ծոցում այս նոր անդամի՝ հարսի մուտքը սրբագործելու համար քահանան մի բաժակ կարմիր գինի օրհնելուց հետո, խմեցնում էր նախ հարս ու փեսին և ապա նույն բաժակից մեկ-մեկ ումպ էլ՝ բոլոր ներկաներին, իբրև արյունակից դարձնելու, տոհմագրման խորհրդանիշ։

Գամիրքի որոշ շրջաններում, հատկապես Կեմերեկից Կեսարիա, նարոտի քանդումից հետո, նախքան առագաստը, տեղի

---

35 Կեմերեկից դեպի Կեսարիա հայկական գյուղերում ինչպես հարսանեկան երգերը, նույնպես և լարեմաղթանքները ընդհանրապես լինում էին թուրքերեն՝ «Կելինիմ այաղրն դուտիմլի, պաշրն դովլեթլի օսլուն»։

36 Ա. Քնչյան, Ակն և Ակնցիք, Փարիզ, էջ 270։

37 Վ. Համբարձումյան, Գյուղաջխարհ, Փարիզ, 1927։

38 «Բիւրակն», Կ. Պոլիս, 1900, էջ 724։

39 Առագաստի հաջորդ առավոտը, հելվայով մեծարելու հետևանքով, կոչվում էր հելվայի օր։

էր ունենում հարսի պարը։ Ազգական կանանց նեղ շրջանակում, հարսնեքույրերից մեկը տեֆը ձեռին Հարսս խրատական երգի եղանակով, պարել էր տալիս հարսին՝ ձեռքերին բռնած երկու փոքր հայելիներով։ Դա հարսի աղջկության վերջին պարն էր համարվում նախքան առագաստ մտնելը։ Այդ պարի ժամանակ, հարսի պարտականությունները հիշեցվում էին երգի բառերով՝ ամուսնուց անբաժան, լեզուն անուշ, տան գործերով զբաղված, ելու հարսս և այլն։

Մինչ հարսի պարը, տեղի էր ունենում փեսու առեվանգումը։ Նախքան առագաստը, մակարները փեսային գողանում էին և ազատ թողնում այն ժամանակ միայն, երբ քավորը խոստանում էր մի խրախճանք կազմակերպել։ Փեսայի առևանգումը տղայի ընկերների կողմից, թեև կատարվում էր որպես իմաստը կորցրած մի սովորություն, այնուամենայնիվ, կարելի է ենթադրել, որ դա մի մնացուկ է տոհմական-համայնական հասարակարգի, որի ժամանակ տոհմակից երիտասարդները որոշ իրավունք ունեին ուրիշ տոհմից առևանգված աղջկա վրա, մի իրավունք, որը մեր օրերում փոխարկվել է նվերի գանձմամբ։

Գամիրքի, հատկապես Կեմերեկ գյուղաքաղաքում նախքան հարս ու փեսային առանձնացնելը, նրանց խորհրդատուները՝ աղապաշին փեսին, իսկ հարսնաքույրը հարսին գոց սնդուկի այլաբանական առակով բացատրում էին կյանքի խորհուրդը։

Առագաստի հաջորդ առավոտյան տեղի էր ունենում հարսի ծնողներին աչքալույս տալու երթը։ Տղայի մայրը, քավորկինը և մոտիկ ազգական տարեց կանայք կուսության սավանը կարմիր ժապավեններով զարդարած, մի սակառի մեջ դրած, վրան էլ մի խնձոր գնում էին աղջկա ծնողներին շնորհավորելու։ Աղջկա կուսության պահանջը կենցաղում արմատացել է հավանաբար մասնավոր սեփականության ու մենամուսնության ծագման համընթաց և ֆեոդալական իրավակարգում, որը սրբագործել էր եկեղեցին։

Գամիրքի գյուղական վայրերում, ինչպես նշվեց, մինչև առաջին համաշխարհային պատերազմը հայ նահապետական ընտանիքը դեռևս քայքայված չէր բոլորովին։ Հին տոհմային կարգը թեև փոխարինվել էր հասարակական նոր հարաբերություններով, այնուամենայնիվ, հնի մնացուկները ամբողջովին չէին անհետացել նույնիսկ քաղաքային վայրերում։ Իրենց հիմքից կտրված այդ հմայա-մոգական գործողությունները թեև առանց որևէ ատրիբուտի, այնուամենայնիվ, որպես ծիսական վերապրուկ, դեռևս պահպանվում էին ժողովրդի կենցաղում։

Այս բոլորը վկայում են այն մասին, որ ինչպես ամենուրեք, այնպես և հայ ժողովրդի և նրա հարազատ մասը կազմող գամիրքահայերի հոգևոր կուլտուրայում որոշակի տեղ են գրավել անիմիստական-հոգեպաշտական հայացքները և տոհմային աշխարհայացքի ու նրանից ծագած բարքերի ու ծեսերի հազարամյա ազդեցությունն այնքան զորավոր է եղել, որ նոր ժամանակներում տեղի ունեցած սոցիալ-տնտեսական զգալի փոփոխություններից հետո էլ պահպանվել էին որպես վերապրուկ, հաճախ իմաստը կորցրած ու կիրառողների կողմից անբացատրելի։

Գ. ԱԶԳԱԿՑԱԿԱՆ ԵՎ ԴՐԱՑԻԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ազգակցական և դրացիական հարաբերությունները, հատկապես Գամիրքի հայկական գյուղերում, դեռևս մինչև 20-րդ դարի սկզբները իրենց վրա կրում էին հին ավանդական սովորույթների դրոշմը։ Դա հասկանալի է, որովհետև հին գյուղը հին ավանդական սովորույթների լավագույն պահպանողն է հանդիսանում։

Ինչպես հայտնի է, մինչև 19-րդ դարի 50-ական թվականները Արևելքում ընդհանրացած հողօգտագործման իրավունքով Արևմտյան Հայաստանում հողը դրված էր գյուղական համայնքի տնօրինության տակ։ Յուրաքանչյուր գյուղ ուներ իր հուտուալամե-ն՝ սահմանադիրը, որի մեջ նշանակում էին գյուղին պատկանող հողատարածությունների սահմանները, որոնց մեջ պարփակվում էին գյուղական համայնքի վարելահողերը, մարգագետինները, արոտավայրերը։ Այս ամենը գյուղական համայնքի ընդհանուր սեփականությունն էր կազմում, իսկ գյուղական համայնքի մեջ մտնող

տնտեսությունները համայնքի հողերից մշակում էին այնչափ, որչափ հնարավորություն և միջոց ունեին և մշակված հողը պահում էին իրենց ձեռքում որպես ճագգը-գարար-ով տրված իրավունք[10]։

Սակայն, ինչպես ողջ Թուրքիայում, այնպես և Գամիրքում կային նաև թիմարային և վանքապատկան գյուղեր կամ ագարակներ, որտեղ սակավահող գյուղացիները կիսարարության (օրթախչիություն) կամ վարձակալության շատ ծանր պայմաններով հող էին մշակում։ Գամիրքի տարբեր շրջաններում, բացի բազմաթիվ անհատ տնտեսություններից, որոնք գտնվում էին վերոհիշյալ պայմաններում, կային և թիմարային գյուղեր ու գյուղախմբեր, որոնց մեջ սաստիկ խորացել էր տնտեսական անհավասարությունը։ Օրինակ՝ Սարոսի ներքին հովտում Ջամանթի (Սամնդավ) գետեզրին կար յոթ գյուղ, որոնք վարձակալության խիստ ծանր պայմաններով հող էին մշակում Նեպի-բեյի թիմարում[41]։ Դրանցից երեքը՝ Յենիճեն, Յալգը Բուրունը, Ղազը Կոմեգին կազմված էին Թոմարզայի սակավահող հայ գյուղացիներից, իսկ չորսը թուրքերից՝ Յուսեյունյու, Փունղու, Մելենկի, Բոլտաճը։ Նրանք բացի վաշխառուական բարձր տոկոսների համար վճարումից, տարեկան բերքի մեկ ութերորդը տալիս էին պետությանը, իսկ մեկ տասներորդը՝ փաշային[42]։

Գյուղական համայնքում հողօգտագործման հին ձևը 1858 թվի թագավորական հատուկ հրովարտակով հիմնականում փոփոխության է ենթարկվում։ Օսմանյան պետությունը Ղրիմի պատերազմից հետո իր հատկապես Անգլիային և Ֆրանսիային տրվելիք բազմապատկված պարտքերը հետզհետե մարելու նպատակով, հողային կալվածների անհատական սեփականություն՝ թափու է սահմանում։ Ուստի մինչ այդ ճագգը-գարար-ի իրավունքով. յուրաքանչյուր տնտեսության մշակած հողը նրա անհատական սեփականությունն էր ճանաչվում։

Այսպես, 19-րդ դարի երկրորդ կեսի սկզբներից սկսած, օսմանյան պետության նոր եկամտահարկերը մի կողմից, առևտրավաշխառուական կեղեքումները մյուս կողմից, ավելի ևս խորացնում էին գյուղի շերտավորումը։ Նահապետական մեծ ընտանիքները սկսում են քայքայվել, հետևաբար և սկսում են առաջանալ որոշ փոփոխություններ նաև ազգակցական և դրացիական հին հարաբերությունների մեջ։ Այնուամենայնիվ, Գամիրք գավառի հաղորդակցության ճանապարհներից հեռու, մեկուսի ընկած շրջանների գյուղերում, մինչև համաշխարհային առաջին պատերազմը, ազգակցական և դրացիական հին սովորույթները հիմնականում պահպանվում էին, քանի որ այդ վայրերում շուկայական հարաբերությունները շատ թույլ էին ու դեռևս գերիշխում էր բնատնտեսությունը։ Ազգակցական հարաբերություններն իրենց արտահայտությունն էին գտել, օրինակ, մեկ ազգատոհմի պատկանող արական գծով ընտանիքների մեկ թաղամասում բնակություն հաստատելու, համատեղ սար բարձրանալու, դրացիների միջև փոխօգնության, հյուրասիրության, իրար պաշտպանելու վրիժառության, ինչպես նաև՝ բնության արհավիրքներից զերծ մնալու համար հավաքական զոհաբերությունների՝ մատաղների, ուխտագնացությունների մեջ։

Գամիրքի Արդեոս (էրճիաս) լեռան ստորոտում գտնվող Ճյուճյուն գյուղը Կեսարիայի թրքախոս հայկական գյուղերից մեկն էր, ընդամենը 150—160 ընտանիքով, բնակված ըստ ազգատոհմերի՝ չորս առանձին թաղերում։ Այդ թաղերից յուրաքանչյուրը կոչվում էր տվյալ վայրում բնակվող ազգատոհմի անունով։ Օրինակ, Ջորդյուք-օղլուլար մահլասի, Պարսամ-օղլուլար մահլասի, Կյուլապ-օղլուլար մահլասի և Լեոն-օղլուլար մահլասի (իմա՝ այսինչի որդիների թաղ)։

Գամիրքի հյուսիս-արևմտյան կողմը՝ Ագ-դաղի անտառամիջում կար հայկական Ջաթ գյուղը, որտեղ միևնույն ազգատոհմին օղլուլար մահլասի (իմա՝ այսինչի որդինե-

---

[10] Ա. Մկրտչյան, Հողային հարցը Թուրքահայաստանում, «Գործ» ամսագիր, Բաքու, 1917, № 4, էջ 65—66։

[41] Օսմանյան սուլթանները, ռազմա-ֆեոդալական այդ երկրում, զինվորական ծառայությունների համար որպես նվեր, հողեր էին տրամադրում ավարի սկզբունքով։

[42] Հակոբ Ա. Արզումանյան, Էվերեկի պատմությունը, Ա, դիրք, Գահիրե, 1935։

լանջերին, առանձին շարքերով. կառուցել էին իրենց տները։ Այդ շարքերից յուրաքանչյուրը կոչվում էր թաղի այդ մասում բնակություն հաստատած ազգատոհմի անունով։ Այսպես, Վարդապետենք, Դեմիրճենք, Պեին-օղլուենք, Քեշիշ-օղլուենք, Կուլաղոզենք և այլն։ Պետք է նշել, որ բացի հեռավոր շրջանների գյուղերից, քաղաքատիպ մեծ ավաններում, նույնիսկ քաղաքներում կային թաղեր, որոնք կոչվում էին ազգատոհմի անունով։ Օրինակ՝ Արաբկիր գյուղաքաղաքում Ալմասեքյանց թաղը, Եկավենց թաղը, Տերբեդերենց թաղը, իսկ Սեբաստիա (Սվաղ) քաղաքում՝ Պլեճենց թաղը, Թայքեսենենց թաղը և այլն։ Որոշ թաղեր էլ, թեև ազգատոհմի անունով էին կոչվում, բայց արդեն կորցրել էին իրենց ազգակցական կցաթաղի նախկին հատկանիշները։ Մինչդեռ հեռավոր շրջանների գյուղերում, կցաթաղերը ոչ միայն պահում էին իրենց ազգատոհմի անունը, այլև ազգակից։ դրացիները թեև տնտեսապես ինքնուրույն էին և առանձին տներում էին ապրում, սակայն, ինչպես ընդունված էր շատ հայաբնակ նահանգներում, դեռևս իրար մեջ պահպանում էին նույնիսկ հաղորդակցության հին միջոցները։ Օրինակ, մեկ տնից մյուսը գոյություն ունեին պատերի մեջ բացված ակնատներ, Գամիրքի բարբառով՝ պատծակեր, ինչպես նաև՝ պարտեղների, բակերի միջև խոռեր, դռներ և գետնափոր գաղտնի անցքեր։ Առաջինի միջոցով, եթե կատարվում էր առօրյա խոսակցական հաղորդակցությունը, ապա խոռերի, գետնափոր անցքերի, ներքին դռների միջոցով առանց փողոց դուրս գալու, հատկապես վտանգի, հարձակման ժամանակ, հեշտացվում էր հավաքական ինքնապաշտպանության կազմակերպումը։

Գյուղական համայնքում պահպանվում էր նաև դրացիների միջև հին ավանդական փոխօգնությունը (մեջի), որը ի հայտ էր գալիս հատկապես դժբախտ դեպքերի առիթով, մանավանդ համայնքի շահերի համար զոհված մեկի անօգնական տնտեսության արտը հերկելու, ցանելու, հնձելու, փոխադրելու, կալսելու և ներս առնելու աշխատանքներում։ Ուստի և փոխօգնության կիրառումը սահմանափակում էր վարձու բանուժի կիրառումը։ Դրացիների միջև տարածված էր նաև կաթ փոխատալու սովորությունը, որպեսզի այդպիսով ամեն մի տնտեսություն կարողանար պատրաստել իր ձմեռվա պաշար կաթնամթերքը՝ պանիր, յուղ, չորթան և այլն։ Փոխօգնության այդ ձևը մեծ նշանակություն ուներ հատկապես սակավաթիվ կթան ունեցող չքավոր ընտանիքի համար։

Հետաքրքրական են նաև Գամիրքի առանձին շրջանների որոշ գյուղերում հավաքական հյուրասիրության վերապրուկը, դրա որպես ցայտուն օրինակ կարելի է նշել Արգեոսի շրջանի Ճյուճյուն գյուղը։ Այստեղ յուրաքանչյուր թաղ ուներ իր հասարակական օրգանը՝ հյուրանոցը, որը տվյալ ազգակցական թաղի հավաքական սեփականությունն էր հանդիսանում։ Յուրաքանչյուր թաղ իր հյուրանոցում ընդունում էր այն անցորդ հյուրերին, որոնք նշանակվում էին տվյալ գյուղի քյահյայի (ռայիսի, ռեսի) կողմից։ Այսպես, եթե հյուրերը նշանակում էին ստանում, որ Կյուլապ-օղլուլար թաղի օդայում պետք է գիշերեին, տվյալ թաղի տնտեսությունները, ըստ սովորության, հերթականությամբ հայթայթում էին հյուրերի ճաշը, տեղաշորը (անկողինը), ինչպես նաև նրանց անասունների կերը, ձմռան օրերին՝ հյուրանոցի ջեռուցումը։ Տվյալ թաղի յուրաքանչյուր տնտեսություն ամեն տարի, աշնան վերջերին, սայլերով անտառից վառելափայտ էին փոխադրում և դարսում հյուրանոցի գետնահարկ պահեստում։ Սակայն Գամիրքի ոչ բոլոր գյուղերում էր պահպանված հավաքական հյուրասիրության այդ ավանդական ձևը։ Կային գյուղեր, ուր հյուրերը ընդունվում էին կալվածատեր աղայի կողմից, իսկ կառավարական պաշտոնյաները, հյուրասիրվում էին ընդհանրապես գյուղի քյահյայի կողմից։ Վերջիններիս հյուրասիրման համար, պարտադիր կարգով գյուղական համայնքը հատկացնում էր, ըստ գյուղի տնտեսությունների քանակի, տարեկան 300—400, մինչև 500 ղուռուշի մի գումար, իսկ նրանց ձիերի համար գարի, դարման կամ առվույտ էր հավաքվում կալի վրա, որը պահ էր տրվում գյուղում հարգված մի անձնավորության մոտ, կարիքի դեպքում մաս առ մաս վերցնելու համար։

Գյուղական համայնքի, ինչպես նաև ազ-

գակցական կցաթաղերի հին կենցաղի որպես վերապրուկ, Գամիրքի հայկական գյուղերում դեռևս պահպանվում էր աշխատանքային որոշ համագործակցություն, ոռոգման առուների մաքրման, ճանապարհների և կամուրջների շինության ու վերանորոգման գործերից բացի, թաղերում աղբյուր, ջրամբար կամ ջրհոր կառուցելու համար։

Ինչպես հայտնի է, Հայկական բարձրավանդակի լեռնային պայմաններում ջրի հարցը, դարերի ընթացքում հույժ կարևոր հարց է հանդիսացել, ինչպես լեռնային մարմանդներում անասնապահությամբ զբաղվողների, նույնպես և դաշտային վայրերում երկրագործությամբ զբաղվող բնակչության համար։ Ուստի ստեղծվել էին ջրապահեստման և ջրաբաշխական բազմապիսի ձևեր։ Հին ջրապահեստման յուրահատուկ ձևերի կիրառումը պահպանվել էր հատկապես այն վայրերում, ուր բնական պայմանները չեն թույլատրել բավարար թվով աղբյուրների կառուցումը։ Օրինակ, Կեսարիայի շրջանում խմելու ջրի օգտագործման ձևը ընդհանրապես ջրապահեստային էր։ Բացի այն, որ մեծահարուստ տնտեսություններն ունեին իրենց սեփական ջրամբարը, կային նաև թաղային ջրապահեստներ, որոնց պատրաստումը և պարբերական մաքրումը, վերանորոգումը կատարվում էր տվյալ ջրապահեստը օգտագործող թաղի բնակիչների կողմից։ Օրինակ, Արգեոսի շրջանի Ճյուճյուն գյուղում աղբյուր չկար, այլ Արգեոս լեռից հոսող առվի ջուրը կավե խողովակներով (քյունգ) գյուղ բերվելով, բաժանվում էր 24 ջրամբարների (սահրինջ) մեջ։ Ճյուճյուն գյուղի ջրամբարի պատրաստման այդ յուրահատուկ ձևից ելնելով, պետք է ենթադրել, որ այն դարավոր աշխատանքային փորձի ժառանգություն էր։ Ճյուճյուն գյուղը գտնվում էր Արգեոս լեռան հրաբխային ժայթքումներից գոյացած թիրեմ կոչված վարդագույն տուֆաքարի կոնաձև մի սարահարթի վրա։ Ուստի և, պարզ է, որ ջրամբարը ամբողջությամբ պետք է պատրաստվեր տուֆաքարի մեջ։ Սակայն տուֆաքարի վերին խավը համեմատաբար փխրուն լինելով, անհրաժեշտ էր հորատել 5—15 մետր խորություն՝ մինչև թիրեմի ամուր շերտին հասնելը, որպեսզի հնարավոր լիներ դրա մեջ գետնուղի փորել։ Չորս գետնուղի էին հորատում, բերանները հորի հատակի վրա բացված, որով ստացվում էր չորս թևերով մի հոր, մի մեծածավալ ջրամբար, որից օգտվում էին գյուղի չորս թաղերը։ Ջրի պահպանման և մաքրության համար ամբողջ ջրամբարը, թունելներով հանդերձ, խորասանով[43] ծեփելով, մի քանի օր թողնում էին, որպեսզի չորանա, իսկ կրի տհաճ համը վերացնելու համար երկու երեք անգամ լվանում էին ողջ ջրամբարը, ապա ջուրը բաց թողնում։ Ջրամբարի պատրաստումը, ինչպես և տարեկան երկու անգամ մաքրումը (մարտ և սեպտեմբեր ամիսներին) կատարվում էր այն ազգակից դրացիների կողմից, որոնք օգտագործում էին ջրամբարի ջուրը։

Կեսարիայի շրջանի հայկական գյուղերում, ջրամբարի հավաքական պատրաստումից և միասնաբար օգտագործումից բացի, ազգակից դրացիների, բարեկամների, ծանոթների կողմից փոխօգնություն էր ցույց տրվում բնակարանների շինարարության, ինչպես նաև կտուրների հողը վերափոխելու համար, հատկապես սայլերով չորախ փոխադրելու գործում։

Գամիրքի արևելյան մասում գտնվող Տիվրիկ ավանում նույնպես վազող ջրի աղբյուր գոյություն չուներ։ Ուստի և մի քանի դրացիներ միասնաբար, պատրաստում էին ջրհորի ձևով կլոր մի ջրամբար, որը տեղական բարբառով կոչվում էր ջվոr կամ ավելի փոքրը՝ գյոլ (լիճ), որը ավանի միջից հոսող Ջաթալ-չայի ջրից գիշերը լցնում էին և օգտագործում։ Տարեկան երկու անգամ էլ միասնաբար կատարում էին ջրհորի տիղմը մաքրելու և անհրաժեշտության դեպքում վերանորոգման աշխատանքները։ Կյուրինը հարուստ էր խմելու ջրով։ Ամեն տնտեսություն ակ-ի մշտահոս ջրից ուներ իր բաժինը, բացի Որեն թաղից, որի բնակիչները կառուցում էին նույն ձևով փոքր ջրամբար, որը կոչվում էր հավուզ, բայց, ի տարբերություն մյուս շրջանների, այստեղ ջուրը լցվում էր օրընդմեջ գիշեր ժամանակ և ցերեկը օգտագործվում։

---

[43] Խորասանը պատրաստելու համար օգտագործվում էր լվացված բարակ ավազ, մարած կիր, թոնրի կտորներ, մանր կտրված կանեփի թել և ձվի սպիտակուց։



Նկ. 24. Կեսարիայի շրջանի ծյուծյուն գյուղի քառաթև ջրամբարի (սահրինչ) գծագիրը։

Կեսարիայի արվարձան Թալաս ավանում նույնպես աղբյուր գոյություն չուներ, հետևաբար խմելու ջրի համար, եթե հարուստ տնտեսությունները պատրաստում էին իրենց սեփական ջրամբարը, ապա միջակ և աղքատ մի քանի դրացի տնտեսություններ, միասին օգտագործելու համար, պատրաստում էին իրենց հավաքական ջրամբարը, ղույու-ն (թուրք. ջրհոր) և մշտապես լցնում Զինջիդարայից հոսող առվից։ Ուշագրավ է, որ Զինջիդարայի առվի ջրով հնարավոր էր Թալաս ավանի վերի և վարի թաղերում մի

քանի աղբյուրներ կառուցել, սակայն նախապատվությունը տրվում էր ջրամբարում նստած ջրին, արմատացած մի սովորություն, որը երևի ավելի շուտ գալիս էր նստվածք տալով մաքրելու դիտավորությունից, քան թե հնուց մնացած, կամ ինչ որ տեղից բերովի սովորությից։

Ջրամբարից շուր քաշելու համար, եթե քաղաքներում և քաղաքատիպ ավաններում օգտագործվում էր դոլապ և նույնիսկ ձեռքի ջրհան փոքր մեքենա, ապա գյուղերում կիրառվում էր դույլը, ինչպես նաև դանքարը (լծակով շուր հանելը)։ Գամիրքի ինչպես գյուղերում, նույնպես և քաղաքներում, բացի սեփական և հավաքական ջրամբարներից կային նաև աղբյուրներ, որոնք կառուցված էին առանձին գերդաստանների կողմից և կրում էին նրանց անունը։ Օրինակ, Զաթ գյուղում Վարդապետենք, Դեմիրճենք, Քեշիշօղլիենք ունեին իրենց կառուցած աղբյուրները, իսկ Թալաս ավանում, հատկապես Պալյոդյանները՝ իրենց կրկնակի կամարներով 15×15×8 մետր հսկա ջրամբարը։ Բայց ինչպես վերոհիշյալ աղբյուրների, նույնպես և ջրամբարի օգտագործումը հասարակաց էր։

Հատուկ հիշման արժանի են նաև Արգեոսի շրջանի Ճյուճյուն գյուղի երկու կողմի սահմանամերձ վայրերում կառուցված այն խայրեթ[44]-բարեգործական ջրամբարները, որոնք ծառայում էին անցորդներին և նրանց անասուններին ջուր մատակարարելու։ Ավելին, այդ գյուղի արտերի խոզան թողնված մասում, ջրամբարի մոտ, ամեն տարի երկու օրավար տարածության վրա գյուղի համայնքի կողմից ցանվում, մշակվում էր նաև մի խայրեթ պտղաբանջարանոց, որտեղից անցորդները մի քանի վարունգ, սեխ կամ ձմերուկ քաղելով հանգստանում էին ջրամբարի ծառերի տակ և օրհնանք ու բարի ցանկություններ մաղթում գյուղին։

Այդպիսի օրինակելի և գեղեցիկ սովորությունների առկայությունը Գամիրքի հայկական գյուղերում հիշեցնում է հնագույն անցյալը, երբ տոհմերը իրենց բնակավայրերի սահմաններում, կենսամթերքներ էին թողնում այլ տոհմերի համար։

Տոհմային հասարակության կենցաղից ու բարքերից մնացած այլ սովորություններ ևս կային, որոնց թեև ձևական կողմն էր որոշ չափով պահպանվել դասակարգային հասարակության պայմաններում, բայց բովանդակությունը որոշակիորեն փոխվել էր։ Օրինակ, Կեսարիայի շրջանի նույն Ճյուճյուն, Թաշխան և այլ գյուղերում ցորենի ճորերը գտնվում էին մի վայրում, այն տարբերությամբ միայն, որ փոխանակ ամբողջ համայնքի հացահատիկը միասին ամբարելու, յուրաքանչյուր տնտեսություն նույն վայրում ուներ իր առանձին ցորենի ճորը։ Վերջինս մի մեծ կարասի ձև ուներ, միայն թե փոխանակ կավից պատրաստված լինելու, քարափոր էր, ուղղակի տուֆաքարի մեջ։ Արգեոս լեռան հրաբխային ժայթքումներից գոյացած քարը ցորենի ավելի էժան պահեստների պատրաստման հնարավորություն էր տալիս։ Ի դեպ, Կապադովկիայում ցորենի շտեմարանները հիշվում են շատ հին ժամանակներից, որոնց մեջ հատիկը իր որակը պահպանում էր շուրջ 30 տարի։ Այդ վկայում են հին պատմագիրներից՝ Վարոսը, Պլինիուսը և Թեոփրաստը, որ այդ շտեմարաններում պահված պեռաու կոչված ցորենը նույնիսկ 60—70 տարիների ընթացքում պիտանի էր հացի համար, իսկ 40 տարի՝ սերմանելու համար[45]։

Դասակարգային հասարակության պայմաններում փոխվել էր նաև անասունների, հատկապես ոչխարների հոտի կազմության, ինչպես ասվում է՝ ճյուղ ճանելու հին ձևը։ Անցյալում, բնափակ տնտեսության պայմաններում քանի դեռ նահապետական մեծ ընտանիքի ձևը ընդհանրություն էր հանդիսանում, յուրաքանչյուր գերդաստանի ոչխարները կազմում էին առանձին մի ճյուղ—հոտ, իսկ հովիվները լինում էին նույն գերդաստանի անդամներից, որով ինչպես ճյուղը, նույնպես և ամառանոցի արոտավայրը կոչվում էր այդ գերդաստանի անունով։ Բայց հետագայում գյուղի շերտավորման ավելի խորացման հետևանքով, երբ սկսում են քայքայվել գերդաստանները և տնտեսությունները փոքրանալ, ճյուղի կազմությունը (հոտի կազմությունը) թեև պահում էր իր

[44] Խայրեթ-խեյրիեթ արաբ. նշանակում է բարեգործական նպատակով կատարված գործ։

[45] Տե՛ս «Հանդես Ամսօրեայ», Վիեննա, 1900, էջ 37։

ձևական կողմը, սակայն փոխվում էր իր բովանդակությամբ։ Ճյուղագլուխը. լինում էր ամենաշատ ոչխար ունեցողը (հետևաբար և կոչվում էր նրա անունով), սակայն ճյուղի անդամները՝ նրա քեռը լինում էին դրացիներ, ծանոթներ և բարեկամներ։ Այսպես, ուրեմն, ճյուղ ճանելու ձևը ներկայացնում էր աղգատոհմային հին սովորույթի այլափոխված մի մնացուկը, որտեղ ճյուղագլուխը գերդաստանի մեծի փոխարեն լինում էր ոչ-արյունակցական կապերով մեկը, որը շատ ոչխարներ ուներ։ Այնուամենայնիվ, այդ ճյուղագլուխը, ճյուղի ղեկավարը լինելով հանդերձ, ճյուղի մաս կազմող ընտանիքների սեփականությունը տնօրինելու ոչ մի իրավունք չուներ, այլ պարզապես ճյուղի ընդհանուր գործերի վարիչն էր հանդիսանում։ Օրինակ, ճյուղագլուխը իր քեռին հովվի հետ խորհրդակցության էր կանչում, հովվի վարձատրության, նրա օրական սննդի՝ հացի չափը և ըստ ոչխարի գլխաքանակի, հերթականությունը որոշելու համար։ Իսկ Գամիրքի որոշ շրջաններում ճյուղագլուխն ինքն էր հովիվ վարձում, հայթայթում նրա սնունդը, զգեստը և քեռից գանձում էր յուրաքանչյուր ոչխարի համար որոշված գումարը մինչև քսան ոչխարից մի թոխլի։

Ճյուղի ներքին գործերի տնօրինման մեջ, եթե նրա քեռը բերում էին իրենց մասնակցությունը, ապա գյուղի համայնական արոտատեղերի պահպանման, արածեցման վերաբերյալ որոշումները ընդհանրապես կայացվում էին քյահյայի գլխավորությամբ, մեծ անասնատեր ճյուղագլուխների խորհրդակցությունում։ Այլ խոսքով, ճերմակ մորուքները (մուխթար) չորպաճիի գլխավորությամբ կարգադրում էին գյուղական համայնքի վերաբերյալ բոլոր գործերը[46]։

Այսպես, գյուղի շերտավորման պայմաններում, թեև ճյուղի (ոչխարի հոտ) գործերի վարման ընագավառում պահպանվել էին տոհմային հասարակության հին կենցաղային որոշ մնացուկներ, սակայն գյուղում առևտրական հարաբերությունների աշխուժացման հետևանքով ստեղծվել էին նաև շահադիտական նոր փոխհարաբերություններ։ Օրինակ, ճյուղի անդամ լինելը, սարում դրկիցությունը կախված էր գլխավորապես ճյուղագլխի կամքից։ Ուստի, ամառանոցների գերդաստանային սեփականության ձևը թեև իր բովանդակության մեջ որոշ փոփոխության էր ենթարկվել, սակայն ճյուղագլուխը իր գերդաստանի համայնքային սեփականությունը, հատկապես յայլատեղին տնօրինելու իրավունքը դեռևս պահում էր իր ձեռքին։ Այսուհանդերձ, յուրաքանչյուր գյուղ իր համայնքային յայլատեղին, արոտատեղիները, մարգագետինները մեծ կալվածատեր աղաների և կամ ուրիշ գյուղերի ոտնձգություններից պաշտպանելու համար, հավաքական դիմադրություն էր կազմակերպում։ Օրինակ, Հալիս գետի վերին հովտի Կովտուն գյուղը Խորսանայի դեմ տարիներ շարունակ կռիվ էր մղում արոտատեղիների համար։ Դա այդպես էր ոչ միայն գյուղերի, այլև ազգակցական տարբեր թաղերի միջև. թաղը որևէ հարձակման ժամանակ հավաքական դիմադրություն էր կազմակերպում։ Ազգակցական կցաթաղում ապրող ազգակից հարևանները թեկուզ իրար հետ խռով լինելին, ազգատոհմի պատվի համար միացյալ ուժերով կռվի էին դուրս գալիս հարձակվողի դեմ։

Դասակարգային հասարակարգի պայմաններում այդպիսի նեղ ազգակցական համագործակցության երևույթների կողքին, առկա էր նաև գյուղական համայնքների պայքարի ավելի լայն համագործակցություն, ընդ որում ոչ-ազգակից և ոչ-կրոնակից տարբեր գյուղական համայնքներ միանում էին ընդդեմ իրենց շահագործողի։ Այսպես, Սարոսի հովտում Զամանդի (Ծամընդավ) գետի մոտակա յոթ գյուղերից երեքը՝ Ցաղտը պուրուն, Ղազը Կոմեդի, Ենիջե (հայկական) և չորսը թուրքական՝ Ցուսեյուննու, Փունղու, Մելենգի, Բոլդաջը վարձակալային շատ ծանր պայմաններով օգտագործում էին Ների-բեկի թիմարային հողերը, սակայն սուլթան Համիդի գահընկեցությունից հետո (1908 թ.) գյուղացիները միացյալ ուժերով երկար տարիների դատավարությունից հետո, մասամբ թեթևացնում են իրենց պարտքերը։

Գամիրքի հայերի կենցաղային սովորությունների մեջ դեռևս որոշակի տեղ էին գրավում նաև բնության զարթոնքի, ինչպես

[46] Տե՛ս Հակոբ Ա. Արզումանյան, Էվերեկի պատմությունը, Ա. գիրք, Գահիրե, 1935, էջ 27։

նաև արհավիրքների՝ երաշտի, հեղեղների, մորեխի ժամանակ հավաքական մատաղի, հասարակաց աղոթքի, ուխտագնացության և այլ վերապրուկներ։

Հիշենք որպես նմուշ բնության զարթոնքի, հետագայում քրիստոնեականի վերածված զատկի տոնի առթիվ Կեսարիայի շրջանի Էվերեկ ավանում կատարված զոհաբերությունը, որը իր ձևով ամենահատկանշականն էր, իսկ իր բովանդակությամբ արտացոլում էր հին հեթանոսական արարողությունները։ Ըստ հնամենի սովորության, քահանան զատկի առթիվ իր ծուխերից մատաղցու հավաքելով, զոհաբերություն էր անում իր տան մեջ և բաժանում այնպես, ինչպես անցյալում անում էին տաճարի քրմերը։ Ավելի ուշ ժամանակներում, XIX դարի 50-ական թվականներին, կրակ օգտագործող բոլոր արհեստավորները՝ կլայեկագործները, երկաթագործները, դերձակները, ինչպես և սափրիչները ավանի բոլոր բնակիչների մասնակցությամբ մատաղի համար գնում էին 11 եզ։ Եզները զատիկ շաբաթ օրը տարվում էին եկեղեցու բակը, եղջյուրներին վառած մոմ կպցրած և քահանաները աղոթելով, օրհնում էին անասուններին, որից հետո կազմ ու պատրաստ սպասող մսագործները անասուններին մորթում, մաքրում և հանձնում էին եկեղեցու խուց խոնի առջև նստած ծերունիներին, որպեսզի միսը մանրեն, իսկ կանայք եկեղեցու բակում նստած սոխ էին մաքրում, մինչ երիտասարդները էշի մեջքին կողովներ կապած, առջևից էլ շարքով երեխաներ մատաղացու բերեք գոռալով, պտտում էին թաղից թաղ։ Յուրաքանչյուր տնտեսություն տալիս էր, ըստ իր կարողության, սոխ, կորկոտ, յուղ և այլն։ Այդպես մինչև երեկո ամեն ինչ արդեն պատրաստ էր լինում և արհեստավորների աշակերտները պատրաստած օջախի վրա եփում էին մատաղը։

Կիրակի առավոտյան զատկի արարողությունից հետո եկեղեցուց դուրս եկող տղամարդիկ, հարուստ թե աղքատ, անխտիր, խառն նստում էին եկեղեցու բակում փռված փսիաթների վրա, տարածելով իրենց անձեռոցը, իսկ վրան՝ տնից բերված գդալն ու դանակը, այլև հին հայկական փայտից երկճյուղ պատառաքաղը, սպասելով ժամարար քահանայի օրհնությանը։ Իսկ ժամարար քահանան, զգեստավորված առաջնորդվում էր մինչև եկեղեցու դուռը, ապա կանգնում էր բարձր սանդղաստիճանի վրա և կարդում վերջին աղոթքը, որից հետո նրստածներին բաժանվում էր մատաղը։ Կանայք չէին մասնակցում ընդհանրական սեղանին, բայց ամեն ընտանիքից մի կին վերցնում էր մեկ-մեկ աման խաշած միս ու քեշկեկ[47] (կորկոտ-հարիսան)։

Այս բոլորը գուցե հետագայում Անահիտի պաշտամունքի հետ կապված և ծիսական արարողության կերպարանք ստացած մի վերապրուկ էր, որը դարերի ընթացքում ենթարկվել էր մի շարք փոփոխությունների։

---

[47] Հակոբ Ա. Արզումանյան, Էվերեկի պատմությունը, Գահիրե, 1935, էջ 28—32։